

ՔՐԵՄԼԻՆ. «ՈՒՔՐԱՆԻԱՆ ԳԻՆ ԿԸ ՎՃԱՐԷ ՌՈՒՍԻՈՅ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ»



Ուքրանիան «գին պիտի վճարե՝ Ռուսիոյ իր հարուածներուն համար, երէկ յայտարարած է քրեմլինի բանքեր Տմիթրի Փեւքով:

«Այդ մասին նոյնպէս խօսած է Նախագահը [Վլատիմիր Փութինը]՝ Ուքրանիան ստիպուած պիտի ըլլայ գին վճարել այն գործողութիւններուն համար, որոնք տեղ գտած են վերջին ամիսներուն: Այժմ նոյնիկն այդ տեղի կ'ունենայ», ԹԱՍՍ լրատու գործակալութեան փոխանցումով՝ ըսած է Տմիթրի Փեւքով:

Անոր համաձայն, Ռուսիոյ զինուած ուժերը «կը շարունակեն յատուկ ռազմական գործողութիւնը, շատ հետեւողականօրէն հարուածներ կը հասցընեն այն թիրախներուն, զորս նպատակայարմար կը նկատեն»:

Ուրբաթ օրը Ռուսիոյ Նախագահը վստահեցուցած էր, թէ Մոսկուան պատրաստ է վերսկսիլ բանակցութիւնները Կիեւի հետ: Միաժամանակ, «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան փոխանցումով, Փութին բողոքած է, մասնաւորապէս, թէ Պետական տումայի ընտրութիւններու քուէարկութեան ընթացքին Ուքրանիան մեծ յարձակում գործած է Մոսկուայի վրայ՝ թիրախաւորելով ընտրատեղամասերը:

Ռուսիոյ Նախագահը նաեւ ըսած է, թէ արդէն 4,5 տարիէ ի վեր շարունակուող հակամարտութիւնը կարգաւորելու բոլոր առաջարկները կը մնան սեղանին վրայ, բայց Մոսկուան պէտք է գնահատէ, թէ ինչը կը բխի իր լաւագոյն շահերէն:

ՄԻՋԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ ՀԱՐԱՒԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՅՆ ԻՐ ԱՐԱՐԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԻՆԱՐԵԻԵԼԵԱՆ ՇՐՋԱՊԱՏԵՆ ՄԱՍՆԱՏԵԼ Զ'ԱՌԱՋԱԴՐԵՐ»

«Անկախներ Լիբանանի համար» հանդիպումին հրաւերով շաբաթ, 26 սեպտեմբեր 2026-ին Պէյրութի «Լը Կրէյ» պանդոկին մէջ տեղի ունեցաւ «Քրիստոնեայ համագումար Հարաւի գորակցութեան համար» խորագրեալ յատուկ համագումար մը՝ մասնակցութեամբ լիբանանեան գաւազան խմբաւորումներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, մտաւորականներու, հոգեւորականներու, լրագրողներու, մշակութասէր ու քաղաքական դէմքերու:

«Բոլորս հայրենիքին, բոլորս Հարաւի համար» նշանախօսքով սկսած այս համագումարին ընդառաջելով իրենց գորակցութիւնը յայտնած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը եւ մարոնիներու Պշարա Ռայի պատրիարքը: Այս առիթով Հարաւի գծով իրենց կեցումածքին մասին ելոյթներ ունեցան գաւազան քրիստոնեայ քաղաքական գործիչներ, ինչպէս՝ խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Ապու Սաապ, խորհրդարանի նախկին փոխնախագահ Էլի Ֆըրզլի, Մարատա կուսակցութեան ղեկավար Սէլման Ֆրենժիէ ներկայացուցիչ Վերա Եամմին եւ այլ մասնակիցներ: Մասնակիցները իրենց խօսքերուն մէջ շեշտեցին իրենց գորակցութիւնը հարաւային Լիբանանին՝ դատապարտելով իսրայելեան յարձակումները:

Այս առիթով խօսք առաւ նաեւ ԴՅԴ Բիւրոյի անդամ, Միջին Արեւելքի պատասխանատու եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի: «Հարաւը Լիբանանի անբաժան մասն է եւ ոչ թէ յատուկ խմբակի մը առնչուող տա-



րածք», յայտարարեց Բագրատունի: Բագրատունի բնորոշեց Հարաւի պատկանելիութիւնը Լիբանանին՝ դիտել տալով, թէ այդ շրջանը մաս կը կազմէ Լիբանանին եւ լիբանանցիներուն: Բագրատունի մերժեց համայնքային պիտակաւորումով ներկայացնել հարաւային Լիբանանը՝ նշելով, որ հարաւային Այն Ըպըլ, Ռըմէյշ, Տըպլը, Զաուզահ եւ Զլէյիա շրջանները քարտէսի վրայ գտնուող սոսկ անուններ չեն, անոնք կը ցոլացնեն լիբանանեան ընկերային-քաղաքական իրավիճակ:

«Ծաւալապաշտական մղումներուն դիմադրելը պէտք չէ նկատել իբրեւ ժողովուրդի մը, կրօնի մը կամ խմբաւորումի մը դէմ ուղղուած յարձակում, այլ անկալ կը բխի հայրենիքի պաշտպանութեան, ժողովուրդի մը իր հայրենական հողամասի եւ անոր սըրբավայրերու պաշտպանութեան իրաւունքի արտայայտութենէ, ժողովուրդներու իրենց ճակատագիրի ինքնորոշման, պետութիւններու գերիշխանութեան պաշտպանութեան սկզբունքէն բխող դրսեւորում է, Լիբանանի բազմազանութեան ու համակցութեան օրինակ ըլլալու արտայայտութիւն է», շեշտեց Բագրատունի:

Ան նշեց, որ հարաւային Լիբանանի վրայ զինուորական յարձակումներու կասեցումը բաւարար չէ, աւելին՝ գետնի վրայ ապահովական ու աշխարհագրական իրողական նոր վիճակներու յառաջացումը իրացականներ կը ստեղծէ, թէ ինչպիսի՝ նոր համակարգ կամ վարչակարգ կ'ուզենք:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԻՐԱՆԸ ԶՆՆԱՐԿԵՑԻՆ ԲԵՌՆԱՓՈՒԱՐՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ ԱՌԿԱՅ ՀԱՐՑԵՐԸ

Իրանի մէջ Հայաստանի դեսպան Գրիգոր Յակոբեանը եւ Իրանի փոխնախագահ Համիտ Փութմոհամմետին քննարկեցին երկու երկիրներուն միջեւ բեռնափոխադրութեան ներկայ վիճակը, ոլորտին մէջ առկայ խնդիրներն ու անոնց լուծման հաւանական ուղիները:

Լուրը հաղորդեց Հայաստանի դեսպանութիւնը: Ըստ հաղորդագրութեան, կողմերը քննարկեցին նաեւ առկայ դժուարութիւններու յաղթահարման հաւանական ուղիները:

ԵՆԽԵՎ-Ն ՄՏԱՀՈԳԻԶ ԿԸ ՆԿԱՏԷ ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԷՆ ԴՈՒՐՄ ԶԳԱԾ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐՈՒ ԶԵՂԵԱԼ ՆԿԱՏՈՒԻԼԸ



Երոպական խորհուրդի հորինողարանական վեհաժողովը (ԵԽՏՎ), որուն դիտորդները հետեւած էին հայաստանեան խորհրդարանական վերջին ընտրութիւններուն, այս օրերուն հրապարակած իր ամփոփիչ գէկուցումին մէջ անդրադարձաւ կարգ մը խոցելի երեւոյթներու՝ արտաքին միջամտութիւն, վարչական կարողութիւններու օգտագործում, ընդդիմութեան ներկայացուցիչներուն նկատմամբ քրեական վարոյթներ եւ առանձին տեղամասերու արդիւններու անվաւեր ճանաչում:

Չէկուցումը մտահոգիչ նկատեց Կեդրոնական ընտրական յանձնախումբին կողմէ «առանց հիմնաւոր պատճառաբանութեան ընտրական տեղամասերու արդիւններու անվաւեր ճանաչումն ու կրկնակի քուէարկութիւն չկատարելը»:

Յիշեցնե՛ք, որ այդ ընտրատեղամասերու արդիւններու չեղարկման իբրեւ հետեւանք խորհրդարանէն դուրս մնաց ընդդիմադիր Բարգաւաճ Հայաստանը, իսկ իշխող Զաղաքացիական պայմանագիրը վճռորոշ քուէարկութիւններու համար յաւելեալ աթոռներ ստացաւ՝ կազմելով խորհրդարանին 3/5-ը:

Ըստ ԵԽՏՎ դիտորդներուն, Կեդրոնական ընտրական յանձնախումբի այս որոշումը ազդած է ընտրութիւններու ընդհանուր արդիւնքին եւ խորհրդարանի ներկայացուցչականութեան վրայ: Հետեւաբար, Հայաստանի իշխանութիւնները յորդորած են փոփոխելու Ընտրական օրէնսգիրքը, որպէսզի յստակ կարգաւորուի կրկնակի քուէարկութեան կայացումը:

Եւրոպացի դիտորդները այլ խնդիրներ եւս առանձնացուցին, մասնաւորապէս՝

րաբար, ընտրակաշառքը, իշխանութեան կողմէ քարոզարշաւին ընթացքին վարչական կարողականութեան չարաշահումը եւ խախտումներու համար արդիւնաւետ, ժամանակին դատական պաշտպանութեան լուրջ թերութիւնները:

«Զարոգարշաւը խիստ առճակատային էր՝ պառակտիչ հռետորաբանութեամբ, եւ կ'ընկերակցէր ընտրակաշառքի ու ընտրական այլ խախտումներու վերաբերեալ մեղադրանքներով, որոնք պատճառ դարձան ընդդիմադիր թեկնածուներու եւ գործիչներու դէմ բազմաթիւ քրեական վարոյթներու, որուն իբրեւ հետեւանք ընդդիմութեան բազմաթիւ աջակիցներ ձեռնպահ մնացին քարոզարշաւին աշխուժ կերպով մասնակցելէ: Ասիկա, ինչպէս նաեւ հանրային հատուածի աշխատողներուն վրայ իշխող կուսակցութեան նախաձեռնութիւններուն մասնակցելու համար գործադրուող ճնշումներու եւ ներդրուած ընկերային-տնտեսական քայլերուն հետ մէկտեղ, մտահոգութիւններ յառաջացուց քարոզարշաւ կատարելու հաւասար կարեւորութիւններուն վերաբերեալ», կը գրեն գէկուցումին հեղինակները:

ԵԽՏՎ-ն նաեւ եզրակացուցած է, որ ընտրութիւններուն արդիւնները ցոյց կու տան, թէ հայ ժողովուրդը ընտրած է եւրոպամետ ուղի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ



Սեպտեմբեր 28-ին Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ ընդունեց ԴՅԴ Հայ դատի յանձնախումբերու ու գրասենեակներու համահայկական խորհրդածողվի մասնակիցները:

ԴՅԴ Բիւրոյի նախկին ներկայացուցիչ եւ Հայ դատի յանձնախումբերու Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ ՏԵՐ Խաչատուրեան կաթողիկոսին ներկայացուց խորհրդածողվի աշխատանքները՝ անդրադառնալով Հայ դատի կառոյցներու գործունեութեան առաջնահերթութիւններուն եւ յառաջիկայ ծրագիրներուն:

Այնուհետեւ Ամենայն հայոց կաթողիկոսը իր օրինութիւնն ու գնահատանքը տուաւ ներկաներուն՝ կարեւոր նկատելով միջազգային հարթակներու վրայ հայկական շահերու պաշտպանութեան եւ համազգային հիմնախնդիրներու բարձրաձայնման ուղղութեամբ գործադրուող հետեւողական ջանքերը:

Հանդիպման ընթացքին քննարկեցան Հայաստանի առջեւ ծառացած

մարտահրաւերներն ու շրջանային զարգացումները, բռնի տեղահանուած արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան, Ազրայէճանի մէջ պահուող հայ գերիներու ազատ արձակման եւ Արցախի հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրները: Այս առնչութեամբ ընդգծուեցաւ ազգային կառոյցներու ներուժի մէկտեղման հրամայականը՝ ի խնդիր համազգային խնդիրներու լուծման եւ հայրենիքի գործարարման:

Անդրադարձ կատարուեցաւ նաեւ ազգային-եկեղեցական կեանքին մէջ իրաւաւորութեան իրաւունքներու իշխանութիւններուն կողմէ Հայոց եկեղեցւոյ դէմ սանձազերծուած դատապարտելի արշաւին ու յարուցուող խոչընդոտներուն: Ընդգծուեցաւ Հայոց եկեղեցւոյ հոգեփրկչական եւ ազգապահպան առաքելութեան կարեւորութիւնը ժողովուրդի հոգեւոր կեանքի օրացման, ազգային ինքնութեան պահպանման եւ հայոց պետականութեան ամրապնդման մէջ:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑԻ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՉԸ



«Հայարտ ենք Պետական անվտանգության կառույցով, որ իր հիմնադրությունեն ի վեր երկրի կայունության եւ հանրային գանձարկղի պահպանման ու պաշտպանության հիմնական յեւակետ եղած է», յայտարարեց Նախագահ Ժոզեֆ Առն անցնող շաբաթավերջին Պետական անվտանգության կառույցի հիմնադրության 41-ամեակին առիթով իր ունեցած ելույթին մէջ: Նախագահը յայտնեց, որ այս կառույցը, հակառակ անոր դէմ լուսանցքայնացման ու նսեմացման փորձերուն, յաջողեցաւ վերագտնել ինքզինքն ու դարձաւ երկրի փտածության դէմ պայքարող ամրակուռ մէկ կռուան: «Անոր դերակատարութիւնը անբաժանելի մէկ մասնիկն է օրէնքի եւ հաստատության պետության կերտումի ծրագիրին», ընդգծեց Նախագահ Առն:

Ան բարձր գնահատեց այս կառույցի գործունեութիւնը՝ շնորհաւորելով անոր ընդհանուր տնօրէնը՝ հազարապետ-գորավար Էտկար Լաուանտոսը եւ գործող պատասխանատու սպաներն ու զինուորականները: Ան ողջունեց այս կառույցի գոհուած Նախատակները, յատկապէս վերջին երկամեակի ընթացքին հարաւային Լիբանանի Նապաթիի շրջանին մէջ իրենց կեանքը գոհած պատասխանատուները: Նախագահ Առն իր խօսքը եզրափակեց վերահաստատելով պետության զօրակցութիւնն ու Նապատը այս կառույցի գործունեության շարունակման ու ամրագրման:

ՍԵՅԻՏ ՆԱՍՐԱԼԼԱՅԻ ԵՒ ՍԵՅԻՏ ՍԱՖԻԵՏՏԻՆԻ ՆԱԴԱՏԱԿՈՒԹԵԱՆ Բ. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

ՇԷՅԻՆ ՆԱՅԻՄ ՔԱՍԵՄ. «ՄԵՆՔ ՔԵՉ ԶԵՆՔ ՅԻՇԵՐ, ԱՅԼ ՀԵՏԴ Կ'ԱՊՐԻՆՔ, ՄԵՆՔ ՈՒՆԻՆՔ ՄԵԿ ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՈՉ ԼԻԲԱՆԱՆՆԵՐ»

Անցնող շաբաթավերջին Յրգալլայի Նախկին ղեկավարներ սեյիտ Յասան Նասրալլայի եւ սեյիտ Յաշեմ Սաֆիետտինի Նահատակության Բ. տարելիցին առիթով, Յրգալլա կազմակերպեց յատուկ ձեռնարկ մը՝ ոգեկոչելու համար անոնց յիշատակը: Ձեռնարկին ներկայ էին Դիմադրության պատասխանատուներ, պետական, քաղաքական ու հոգեւոր անձնաւորութիւններ, կուսակցական եւ միութենական ներկայացուցիչներ ու համակիրներու հոծ բազմութիւն մը:

Այս առիթով ելոյթ ունեցան Յրգալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասեմ, երեսփոխան Ալի Ֆայյատ եւ այլ պատասխանատու անձնաւորութիւններ:

«Դուն համաշխարհային դիմադրող ղեկավար ես, որ կը ներշնչեւ աշխարհի ազատականները», յայտնեց Յրգալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասեմ՝ ակնարկելով սեյիտ Յասան Նասրալլա-



յին: Ան բարձր գնահատեց երկու ղեկավարներու գործունեության արժանիքները՝ պարգելով անոնց Նկարագրային օրինակելի յատկանիշները:

«Քու կենդանութեանը կ'առաջնորդէիր Դիմադրութիւնը, իսկ հիմա Նահատակութեամբդ կ'ոգեւորես ու կը ներշնչես Դիմադրության ղեկավարները», ըսաւ շէյխ Քասեմ՝ նշելով, որ Դիմադրութիւնը հաստատակամ ու ամբողջական վստահութեամբ կը կրէ Նասրալլայի թողած աւանդը:

«Նախատակութիւնդ կը լուսաւորէ Նորահաս սերունդներու ճանապարհը», ընդգծեց շէյխ Քասեմ: «Ան, որ կը խորհի, թէ Լիբանանի մէկ մասին կրնայ տիրակալ, գիշերով անոր միւս մասը՝ կ'երագէ», շեշտեց շէյխ Քասեմ: «Մենք լիբանաններ չունինք, մենք մէկ Լիբանան ունինք, որ կը գոյատեւ ազատարարութեամբ ու իր բաղադրիչ տարրերուն միջեւ գործակցութեամբ», ընդգծեց շէյխ Նայիմ Քասեմ: Խօսք առաւ Նաեւ Յաւատարմութիւն դի-

ՄԱՐԱԾԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԵՆԹԱՅՔ

Սիրելի՛ հայրենակիցներ, մեր Նախնիներուն տուրք եւ տոհմիկ աւանդութիւնները պահելու համար եւ զանոնք Նորահաս սերունդին փոխանցելու մտարդութեամբ, հայկական ասեղնագործութեան իւրայատուկ դրսեւորումներէ՝ Մարաշի ասեղնագործութեան անվճար դասընթացք մը պիտի կայանայ միութեան տիկնանց յանձնախումբի կազմակերպութեամբ: Ձեռագործը ուսուցանողն է տիկին Տիգրանուհի Ճիւլայեանը: Դասընթացքը պիտի սկսի 6 ՅՆՎՏԵՄԲԵՐԻՆ, միութեանս «Գերմանիկ» սրահին մէջ, Պուրճ Յամուտ, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը, երեկոյեան ժամը 6:00-էն 7:00՝ մէկ ամսուան տեւողութեամբ:

Փափաքող կիները կրնան կապ հաստատել միութեան գրասենեակին հետ, ամէն օր բացի շաբաթ օրերէն, հեռաձայնելով կէսօրէ ետք ժամը 2:00-էն 5:00, հետեւեալ թիւին՝ 01-269937, կամ տիկնանց միութեան անդամուհիներուն՝ 70-165973, 70-493270:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԱԾԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»-Ի ՎԵՐԱՄՈՒՏ (2026-2027)

ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետի օրհնութեամբ եւ բարձր հովանաւորութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Արամ Ա. կաթողիկոս հայագիտական հիմնարկ»-ը 2026-2027 տարեշրջանին պիտի բոլորէ իր 14-րդ կրթական տարին՝ շարունակելով հայագիտական նիւթեր Նոր սերունդներուն փոխանցելու իր առաքելութիւնը:

Հիմնարկը իր դռները կը բանայ բոլոր անոնց առջեւ, որոնք կը ձգտին խորացնել իրենց իմացութիւնը հայագիտութեան տարբեր բնագաւառներուն մէջ, անելի մօտէն հաղորդ դառնալ մեր ազգային ու հոգեւոր ժառանգութեան եւ ձեռք բերած գիտելիքը ի սպաս դնել հայ կեանքին:

ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

- Դասաւանդութիւնները տեղի պիտի ունենան շաբաթը երեք օր՝ երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, երեկոյեան ժամը 5:00-7:30, «Խորեն Ա.» կեդրոնին մէջ, Ֆանար:
- Լիբանանէն դուրս բնակող ուսանողներուն պիտի ընծայուի դասընթացքներուն առցանց հետեւելու կարելիութիւն, որպէսզի աշխարհագրական հեռաւորութիւնը արգելք չհանդիսանայ հայագիտական ուսման:
- Ուսումը՝ անվճար:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոր ուսանողները արձանագրութեան համար կը ներկայանան կաթողիկոսարան՝ տնօրէնութեան, առաւօտեան ժամը 9:00-1:00, բացի՝ շաբաթ եւ կիրակի օրերէն:

ՎԵՐԱՄՈՒՏ

Դասաւանդութիւնները կը սկսին երկուշաբթի, 12 հոկտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 5:00-ին:

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԻՆ ԻՐԵՆՑ ՅԵՏ ՈՒՆԵԱԼ՝

- 1 լուսնկար
- Անձնաթուղթի պատճեն
- Բ. Պաքարդեայի կամ անոր համապատասխանող վկայականի պատճեն

ՅԱՐԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

Կաթողիկոսարան՝ +961 (0) 4 410 001
Տնօրէնութիւն՝ +961 (0) 3 713 897
Ե-Նամակ՝ edu@armenianorthodoxchurch.org

Հայագիտական ուսումը՝ ազգային ինքնութեան պահպանման, հայ մշակոյթի ճանաչման եւ Նոր սերունդներու հայեցի դաստիարակութեան կարեւորագոյն ուղիներէն մէկն է:

«ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»-Ի ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի 2026-2027 ուսումնակրթական տարեշրջանի Նոր աշակերտներու արձանագրութիւնները սկսած են:

Դպրեվանք կ'ընդունուին Նախակրթարանի 6-րդ դասարանը աւարտած աշակերտներէն սկսեալ մինչեւ վերի կարգերու աշակերտներ:

Դպրեվանք յաճախել փափաքողները տեսչութեան հետ կրնան կապ հաստատել հեռաձայնելով հետեւեալ թիւերուն՝ +961 71 752259 կամ +961 71 912832:

ՏԵՍՉՈՒԹԻՆ ԴՊՐԵՎԱՆՔ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՄՈՒՏ 2026-2027
ՀԻՆԳՇԱՐԹԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

-ԵՐԵՔՇԱՐԹԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2026-ԷՆ ՍԿՍԵԱԼ

-ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԼԵՒՈՆ ՇԱՆՔ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՐՐՈՆ (ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ) ԵՒ «ԱՂԲԱԼԵԱՆ-ՀՄԸՄ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ «ԺՐԱՅՐ ԵՒ ՅՈՒՆԷ ԽԱՅԱՏՈՒՐԵԱՆ» ԿԵՐՐՈՆ (ՄԸՋԷՐ)

-ԵՐԿՈՒՇԱՐԹԻԷՆ ՈՒՐԱՔՈՐԵՐԸ՝ ԱՌԱՌՏԵԱՆ ԺԱՄԸ 11:30-2:00 ԵՒ ԿԷՍՈՐԷ ԵՔԲ ԺԱՄԸ 3:00-7:00, ԻՍԿ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ՝ ԱՌԱՌՏԵԱՆ 9:00-1:00 ԵՒ ԿԷՍՈՐԷ ԵՔԲ 2:00-6:00

«Վառայ Զայե»ի հիմնադրութեան 40-ամեակին առիթով

ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Մասնակցութեամբ Հայրենի երգիչներ՝

ԼԻԱՆԱ ԵՒ ԿԱՐԷՆ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ

Շաբաթ, 17 Հոկտեմբեր 2026, երեկոյեան ժամը 9-էն սկսեալ, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՅ ՈՒ ԿԸ ՄՆԱՅ

ԶԱՂԱԶԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՐՄԱՏԱԽԻԼ ԸՆԵԼՈՒ ՓՈՐՁԻ

Դիտելով դար մը եւ երեսուկէ տարիներու ժա-մանակ ընդգրկող Յայ յեղափոխական դաշնակցու-թեան փառաւոր անցեալը՝ նոր տեսիլքներով, նոր յանձնառութիւններով եւ անսասան հաւատքով կը դիմաւորենք նաեւ ապագան:

Յայ ժողովուրդի հայրենատենչ երկուքէն ծնած Յայ յեղափոխական դաշնակցութիւնը իր գոյութեան աւելի քան մէկ դարու ընթացքին եղած է ոչ միայն քաղաքական կազմակերպութիւն մը, այլ նաեւ՝ ազ-գային-գաղափարական հզօր կառոյց մը, որ իր կազ-մակերպուած ուժով, հայրենասնուէր ու ազգասնուէր գործունեութեամբ եւ անսահման գոհաբերութիւննե-րով իր անջնշելի դրոշմը դրած է հայոց նորագոյն պատմութեան վրայ:

Այսօր, սակայն, Յայաստանի քաղաքական կեան-քին մէջ Դաշնակցութեան պատմական դերակատա-րութիւնը նսեմացնելու, անոր անցեալը մշուշապա-տելու, նորահաս սերունդին գիտակցութեան մէջ անոր հանդէպ թշնամական պատկեր մը ստեղծելու եւ զայն իրեն իսկ ծնունդ տուած հայրենիքէն արմա-տախիլ ընելու խօսքերն ու փորձերը այլեւս չեն կըր-նար ընդունուիլ իբրեւ տվորական քաղաքական բանալի:

Եւ երբ այդպիսի խօսքերը կը հնչեն Յայաստանի Յանրապետութեան Ազգային ժողովի ամպիոնէն, հարցը կը դադրի ըլլալէ միայն կուսակցական տա-րակարծութիւն մը. հարցը կը դառնայ՝ ո՞ր կը վերջա-նայ քաղաքական ընդդիմութիւնը, եւ ո՞ր կը սկսի քաղաքական հակառակորդի գոյութիւնը վերացնելու ձգտումը:

2026-ի սեպտեմբեր 15-ին Ազգային ժողովի ամ-պիոնէն ՅՅ դաշնակցութեան հասցէին հնչած անհե-թեթ խօսքերը անցան տվորական քաղաքական քըն-նադատութեան կարմիր գիծերը:

Արման Եղոյեան անամօթաբար եւ լկտիօրէն յայ-տարարեց, թէ անհրաժեշտ է, որ «Դաշնակցականու-թիւնը միջեւ արմատները արմատախիլ ըլլայ հայ քաղաքական մտքէն», իսկ մատը թափ տալով դէպի Ազգային ժողովի պատգամաւոր Քրիստինէ Վարդա-նեանը՝ ըսաւ, որ ան պէտք է ըլլայ «վերջին դաշնակ-ցականը»: Ան նաեւ այդ նախադիմքը ներկայացուց իբրեւ Յայաստանի Յանրապետութեան «յարատե-ւութեան, անկախութեան եւ ինքնիշխանութեան» նա-խապայման:

Եղոյեան Դաշնակցութիւնը բնութագրեց նաեւ որ-պէս «աղետաբեր, **կոնֆլիկտածիւ**» կուսակցութիւն մը եւ պնդեց, որ դաշնակցական մտածելակերպը պէտք է վերացնել հայ քաղաքական միտքէն ու նոր սերունդի դաստիարակութիւնէ:

Կը հաւատանք՝ Դաշնակցութիւնը քննադատու-թենէ վեր չէ:

Դաշնակցութիւնը կարելի է քննադատել:

Կարելի է չհամաձայնիլ անոր քաղաքական որո-շումներուն եւ գործելաոճին հետ:

Կարելի է հակադրուիլ անոր գաղափարներուն:

Կարելի է յոյնիսկ խիստ քաղաքական պայքար մղել անոր դէմ:

Բայց քաղաքական հակառակորդի մը «արմատա-խիլ ընելը» չի կրնար դառնալ ժողովրդավարական քաղաքականութեան ընդունելի նպատակ:

Կուսակցութիւնները կը փոխուին, իշխանութիւն-ները կը փոխուին, քաղաքական ուժերու կշիռները կը փոխուին, բայց հայրենիքի եւ ժողովուրդի պատ-մութիւնը չի փոխուիլ ամէն ընտրութենէ ետք:

Դաշնակցութեան պատմութիւնը մէկ խորհրդա-րանական ամպիոնի պարսաւանքով չի ջնջուիր, որովհետեւ Դաշնակցութեան պատմութիւնը իր սե-փականութիւնը չէ միայն:

Ան հայ ժողովուրդի ազատագրական պայքարի, պետականութեան վերականգնման, հայապահպա-նման եւ ազգային գոյամարտի պատմութեան մէկ կա-րեւոր էջն ու օղակն է: Եւ այդ էջը գոյութիւն ունի վա-նքական փաստաթուղթերու, պետական հաստա-տութիւններու, պատմական յուշարձաններու, կա-հատակներու շիրիմներու եւ սերունդներու յիշողու-թեան մէջ ամէնուրեք:

Լաւ յիշէ, անգրագէ՛տ Արման Եղոյեան, որ Յայաս-տանի Ա. Յանրապետութիւնը հռչակուեցաւ 28 մայիս 1918-ին՝ ՅՅ Դաշնակցութեան ազգընտիր ղեկավար, Յայաստանի Յանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի կողմէ, եւ ՅՅ Ազգային ժողովի պաշտօ-նական պատմականը կը հաստատէ, որ այդ հանրա-պետութեան խորհրդարանին մէջ ՅՅ Դաշնակցութիւ-նը ունէր մեծամասնութիւն եւ կը հանդիսանար կա-ռավարող կուսակցութիւնը: Նոյն աղբիւրը կը նշէ նա-եւ, որ այդ խորհրդարանը իր գոյութեան ընթացքին ընդունաւ է 1000-է աւելի օրէնքներ եւ օրէնքի ուժ ու-նեցող փաստաթուղթեր:

Այո՛, այս փաստերը կրնան գնահատուիլ տարբեր քաղաքական դիտանկիւններէ, բայց չեն կրնար բնաջնջուիլ:

Յայաստանի Ա. Յանրապետութեան գոյութիւնը փաստ է:

Վեց դարերու անհայրենիք ու պետականութիւն չունեցող ազգը ստեղծեց հայոց պետականութիւն, եւ այդ վերականգնման շրջանը պատմական իրողու-թիւն է, պրն. Փաշինեան, եւ այդ շրջանին Դաշնակ-ցութեան ունեցած դերակատարութիւնը պատմու-թեան մաս կը կազմէ, Արման Եղոյեան:

ՅՅ Դաշնակցութիւն կուսակցութեան համար ինք-նադաշնաբանական ու գովաբանական խօսքերը միշտ այլ խոտոր հնչած են, սակայն ՅՅ վարչապետին ռաժիլ ու մաղձով թանձրացած ելոյթները քաղաքա-կան կազմակերպութիւններու հասցէին եւ ի մասնա-ւորի 135 տարական կէսքը ունեցող ՅՅ Դաշնակցու-թեան, ղեկավարներու վարկաբեկումը, արդարու-թեան համար ծայր բարձրացնողներու կալանաւո-րումը իրանգարած են մեր գիտակից կեանքերը:

Յարգելի՛ ընթերցող,

ՅՅ Դաշնակցութեան ամենաուժեղ ապացոյցը միշտ եղած է իր գործը:

Գործի եւ զոհաբերութեան ճամբով էր, որ օսմա-նեան բռնապետութեան տարիներուն ՅՅ Դաշնակ-



ցութիւնը հայ ժողովուրդին մէջ արթնցուց ազատա-գրական պայքարի գիտակցութիւնը եւ բարձրացուց ազատութեան պայքարի դրօշը՝ մտալով պատնէշի վրայ:

Գործի եւ զոհաբերութեան ճամբով էր, որ Տեղա-պատմութենէ ընդամենը երեք տարի ետք հայ ժողո-վուրդը կրցաւ վերականգնել իր պետականութիւնը:

Գործի եւ զոհաբերութեան ճամբով էր, որ տաս-նամեակներ շարունակ հայրենիքէն դուրս՝ սփռուքի տարբեր գաղութներու մէջ, պահպանուեցան՝ հայ լե-զուն, դպրոցը, Եկեղեցին, մշակոյթը, կազմակերպը-ւած ազգային կեանքը եւ հայրենիքին կապուելու գի-տակցութիւնը:

Եւ գործի ու զոհաբերութեան նոյն ոգիով էր, որ արցախեան ազատամարտի եւ գոյամարտի տարի-ներուն Դաշնակցութեան երդուեալ ընկեր-ընկերու-իներն ու համակիրները կրկին կանգնեցան առաջին գիծերու վրայ եւ գործով ու արիւթեամբ պատաս-խանեցին բոլորին:

Արման Եղոյեան, եթէ քու մէկ ելոյթով կը կարծես, թէ կը վերացնես ՅՅ Դաշնակցութիւնը, լաւ գիտցիր, որ անոր գոյութիւնը ջնջելը անկարելի է, քանզի հզօրներն անգամ չկարողացան այդ ընել:

Եւ դուն այսօր՝ թելադրուած թրջամետ ղեկավար-ներդ, կ'ըսես «արմատախիլ ընել»: Պէտք է միայն մէկ հարց տալ՝ որո՞ւ՞ արմատները:

Այդ արմատները միայն կուսակցական գրասե-նակներու մէջ չեն խարսխուած:

Անոնք կը գտնուին հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան խորքերուն մէջ:

Անոնք Մուսա Լեւոյան մէջ են:

Անոնք Սասունի լեռներուն վրայ են:

Անոնք Վանի, Շելիքոնի եւ Կիլիկիոյ ազատագրա-կան պայքարներուն մէջ են:

Անոնք մայիսեան հերոսամարտերու բոցավառ հնոցներուն մէջ են:

Անոնք Ա. հանրապետութեան պետական շէնքին հիմքերուն մէջ խարսխաւորուած են:

Անոնք սփռուքի հազարաւոր դպրոցներու, եկեղե-ցիներու, մշակութային կեդրոններու եւ ազգային կա-ռոյցներու պատմութեան մէջ են:

Անոնք Արցախի լեռներուն եւ նահատակներու շի-րիմներուն մէջ են, եւ ամենակարեւորը՝ անոնք ապ-րող նորահաս սերունդներու հոգիներուն եւ յիշողու-թեան մէջ են:

Պրն. Եղոյեան՛, ՅՅ Դաշնակցութեան արմատները չեն արմատախիւրի քաղաքական բեմերէն ու ամ-պիոններէն արտասանուած քանի մը անպատաս-խանատու եւ արտառոց նախադասութիւններով, եւ ոչ ոք կրնայ տապանաբար դնել կենդանի գաղափա-րի մը վրայ:

Դաշնակցութիւնը ունի պատմութիւն, ունի բազ-մահազար նահատակներ:

Դաշնակցութիւնը ունի գաղափարական հիմք, ու-նի կազմակերպչական ժառանգութիւն, ունի դպրոց, մամուլ, մշակոյթ եւ ազգային կառոյցներ:

Եւ ունի սերունդներ, որոնք իրենց կեանքը կապած են Յայաստանի եւ հայութեան ծառայութեան սրբա-զան խորանին ու գաղափարին:

Այդ պատճառով, երբ այսօր անոր դէմ կը հնչեն ծայրայեղ յերիւրանքներ եւ արտայայտութիւններ, երբ անոր գոյութիւնը կը ներկայացուի իբրեւ Յայաս-տանի անկախութեան կամ ինքնիշխանութեան սպառնալիք, պէտք է յիշել մէկ եւ պարզ ճշմարտու-թիւն. Յայաստանի Յանրապետութիւնը որեւէ մէկ կուսակցութեան սեփականութիւնը չէ, ո՛չ իշխանու-թեան եւ ո՛չ ալ ընդդիմութեան, Յայաստանը հայ ժո-ղովուրդի հայրենիքն է:

Եւ Յայաստանի քաղաքական կեանքին մէջ տար-բեր գաղափարներու, կուսակցութիւններու եւ քաղա-քական համոզումներու գոյութիւնը ժողովրդավարա-կան իրականութեան անքակտելի մէկ օղակն է:

Դաշնակցութեան դէմ կարելի է պայքարիլ, բայց Դաշնակցութեան պատմութեան դէմ՝ ոչ:

Պարո՞ն Փաշինեան,

Քաղաքական տարակարծութիւնը բնական է:

Ընդդիմութիւնը ժողովրդավարութեան անբաժան մասն է:

Կուսակցութիւններու միջեւ սուր բանավեճը քա-ղաքական կեանքի իրականութիւն է:

Բայց պատմական կուսակցութիւն մը նսեմացնե-լու, անոր գոյութիւնը վերացնելու կամ անոր գաղա-փարական ներկայութիւնը «արմատախիլ ընելու» լե-զուն չի կրնար փոխարինել պատմական փաստացի իրողութիւնը:

Դաշնակցութեան դէմ կարելի է քաղաքական պայքար մղել, բայց Դաշնակցութեան պատմութեան դէմ քաղաքական հրամանագիր գոյութիւն չունի:

Ժամանակաւորապէս կարելի է փորձել փոխել սե-րունդներու վերաբերմունքը, բայց կարելի չէ փոխել պատմական անցեալը:

Կարելի է քննադատել Դաշնակցութեան իշխա-նութեան շրջանի որոշումները, բայց կարելի չէ Ա. հանրապետութիւնը դուրս բերել Յայոց պատմութենէն

ՅԱՎՈՐ ՃԱՆՊԱՇԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6



ՄԱԿ-Ի ԺԸՆԵԻԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՉ ՀՕՄ-Ի ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

«ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԱՀԱՅ ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ» ԹԵՄԱՅՈՎ

Յայ օգնութեան միու-թիւնը (ՅՕՄ), որ ՄԱԿ-ի Տնտեսական եւ ընկերային խորհուրդին (ECOSOC) մէջ խորհրդատուական կարգավիճակ ունեցող ոչ կառավարական կազմա-կերպութիւն մըն է, Յայկա-կան իրաւական կեդրոնի (ALC) հետ համագործակ-ցաբար, ՄԱԿ-ի Մարդկա-յին իրաւանց խորհուրդի 63-րդ նստաշրջանի ծիրին մէջ կազմակերպեց ձեռ-նարկ մը, որուն կիզակետը եղան գաղթականներու արդարութիւնը եւ Արցա-խէն բռնի տեղահանուած հայ բնակչութեան՝ իրա-ւունքներու վրայ հիմնուած կայուն լուծման ապահո-վումը, յատուկ ուշադրու-թեան առարկայ դարձնելով արցախա-հայ կիներու եւ մանուկներու հարցե-րը:



տակ բերաւ արցախահայութեան հա-մար ՅՕՄ-ի ծաւալած մարդասիրական գործունեութիւնը՝ խաղաղութեան թէ պատերազմի օրերուն, յետպատերազ-մեան ապաքինման շրջանին եւ գաղ-թականութեան ու մարդասիրական տագնապներուն ընթացքին: Ան յիշեց՝ «Սօսէ» մանկապարտէզները, «Արեւա-յին Արցախ»-ը, «2հուլիս հերոսներու գաւառներ»-ը, «Յոյսի օճախներ»-ը եւ այլ ծրագիրներ: Նիկողոսեան նկատել տուաւ, որ Յայաստանի մէջ նոր բնա-կարան մը չի ջնջեր Արցախի մէջ կոր-ուած բնակարանի կապուածութեան իրաւունքը:

Չեկուցաբերներ եւ նիւթեր



տասարդական պատուիրակութիւն մը՝ գլխավորութեամբ ՅՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Լիզա Գալքեան-ժիլիպերի: Պատուիրակութիւնը նաեւ մասնակցեցաւ ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց խորհուրդի 63-րդ նստաշրջ-անին:

Քննարկումները լու-սարձակի տակ բերին սեպտեմբեր 2023-ի պա-տերազմին պատճառով տեղահանուած արցախա-հայութեան մարդու իրա-ւունքներու եւ մարդասի-րական հետեւանքները: ՄԱԿ-ի Մարդկային իրա-ւանց խորհուրդը տեղե-կագրած է, որ քանի մը օրերու ընթացքին աւելի քան հարիւր հազար գաղ-թականներ տեղահանուե-ցան դէպի Յայաստան՝ իբ-րեւ հետեւանք պատերազ-մական գործողութիւննե-րու:

Այս նախաձեռնութիւնը մասնաւորաբար ի մտի ու-նեցաւ տեղահանման ըն-թացքին ապահովութեան, բնակարանային, հողի եւ ունեցուածքի իրաւունքի, մշակութային եւ կրօնա-կան ժառանգութեան պահպանման, հաշտեցնողականութեան եւ անցու-մային արդարութեան եւ կամաւոր, ապահով եւ արժանապատիւ հաւաքա-կան վերադարձի համար կենսական պայմաններու ստեղծման հարցերը:

Մարդասիրական փորձառութիւն եւ իրաւունքի վրայ խարսխուած լուծում-ներ

Քննարկումներու հանդիպման բա-ցումը կատարեց գրուցավար Գայեանէ Խաչիկեան, ու լուսարձակի տակ առաւ արցախեան տագնապին ազդե-ցութիւնները՝ կիներու եւ մանուկներու վրայ, ինչպէս նաեւ շեշտեց անոնց հաւաքական վերադարձի եւ այլ իրա-ւունքներու պաշտպանութեան կարե-ւորութիւնը:

ՅՕՄ-ի անունով խօսք արտասանեց Կասիա Նիկողոսեան, որ լուսարձակի

լետտողականութիւն: Բռնի տեղահա-նութենէ ետք իրաւունքներու պաշտ-պանութիւն» նիւթին մասին: Չեկուցա-բերը ներկայացուց, թէ մարդու իրա-ւունքները եւ գաղթականներու միջազ-գային օրէնքը ինչպէ՛ս կը պաշտպանէ բռնի տեղահանուած անձերու հայրե-նիք վերադարձի իրաւունքը: Կուրմեն-տի խօսեցաւ օրինակներով, թէ միջազ-գային դատական գործիքակազմերը ինչպէ՛ս կրնան լուծման ուղիներ հայ-թայթել՝ միջպետական, հաւաքական եւ անհատական հայցադիմումներու համար:

Յեղասպանութեան կանխարգիլ-ման Լեմքինի հիմնարկի ատենապետ ղոկտ. Էլիսա վոն Եոյտեն-Ֆորկի ներ-կայացուց «Բռնի տեղահանութենէ՛ կանխարգիլում»: Արցախահայութեան պաշտպանութիւն եւ նոր վայրագու-թիւններու կանխարգիլում» նիւթը: Ան

ԴԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Շաբ.ը՝ Էջ 6



ԼԵՄ-Ի Էջը

ԼԵՄ-Ի Էջը

ԼԵՄ-Ի Էջը

ԼԵՄ-Ի Էջը



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սեպտեմբեր ամիսը հայ ժողովուրդի նորագույն պատմության մեջ ազգային կամքի ամիսն է: 1991-ի սեպտեմբեր 2-ին Արցախի ժողովուրդը՝ քաղաքական և իրաական միջոցներով, յայտարարեց իր ազգային կամքն ու ինքնորոշման ձգտումը: Հանրաքուէի ճամբով և սեփական պետականության կառուցելու քայլերով ան հրապարակաւ արձանագրեց իր որոշումը, իսկ օրուան հռչակագիրը այդ որոշումին իրաական հիմքը դարձաւ՝ վկայելով, որ սեփական ճակատագիրը տնօրինելու իրաւունքը կարելի չէ խլել իրմէ:

Երեք շաբաթ ետք՝ սեպտեմբեր 21-ին, Հայաստանի ժողովուրդը համաժողովրդական հանրաքուէով գրեթէ միաձայն արտայայտուեցաւ անկախութեան օգտին՝ վերականգնելով 1918-ի մայիս 28-ով սկիզբ առած անկախ պետականութեան աւանդը: Այս տարի երկու թուականներն ալ կը բոլորեն իրենց 35-ամեակը: Անոնք իրարմէ անջատ իրադարձութիւններ չեն, այլ նոյն ազգային զարթօնքին երկու երեսները՝ ժողովուրդ մը, որ Արցախէն մինչեւ Երեւան միասնաբար որոշեց ազատ ու տէր ըլլալ իր հողին եւ ապագային:

Այսօր սեպտեմբեր 2-ը կը յիշուի բոլորովին այլ պայմաններու մէջ: Արցախը հայաթափուած է, ժողովուրդը՝ տեղահանուած, պետական կառոյցները՝ գրեթէ լուծարուած, մշակութային ժառանգութիւնը՝ անեացման սպառնալիքի տակ, իսկ հայկական քաղաքական որոշ շրջանակներ այս իրականութիւնը կը փորձեն ներկայացնել իբրեւ թշնամիին իրաւունքն ու արդար քայլը, ուր բռնագաղթն ու ցեղային գտուղը կը ծածկուին «խաղաղութեան» անուան տակ, թշնամիին հետ բարեկամանալը քաղաքական իրաւաստութիւն չէ, այլ այդ մէկը կը նշանակէ հրաժարիլ արժանապատուութենէ ու իրաւունքէ եւ խոնարհիլ ցեղասպան թշնամիին դիմաց:

Նոյն իրականութեան լոյսին տակ սեպտեմբեր 21-ը եւս պէտք է դադոր միայն տօնական արարողութիւն մը ըլլալ: Անկախութիւնը տրուած պարգէն մը չէ, այլ՝ ամեն օր պաշտպանելիք ու ամրապնդուելիք պատասխանատուութիւն: Արցախի կորուստը ցոյց տուաւ, որ անկախ պետականութիւնը՝ առանց ապահովութեան, առանց ազգային միասնականութեան ու առանց յստակ տեսլականի, կրնայ խոցելի դառնալ: Երբ սահմանները կը դառնան սակարկութեան առարկայ, իսկ զիջումները կը ներկայացուին իբրեւ ձեռքբերում, այսպիսով վտանգուած է ոչ միայն Արցախի տեսլականը, այլեւ՝ Հայաստանի ինքնիշխանութիւնն ու ապագան: Արցախն ու Հայաստանը միշտ ալ եղած են նոյն պայքարի մասնիկները, եւ մէկուն կորուստը միւսին համար նախազգուշացում է:

Հայ ժողովուրդը իրաւունք չունի հրաժարելու իր պատմական յիշողութենէն, որովհետեւ ժողովուրդ մը, որ իր գոհերուն արինք կը մոռնայ, կը դատապարտուի նոր զիջումներու: Ուստի անհրաժեշտ է ստեղծել համազգային ճակատ՝ Հայաստանի անկախութեան ու արցախեան իրաւունքներու պաշտպանութեան համար: ՀՀԿԼԵՄ-ը հայ երիտասարդութեան կոչ կ'ուղղէ համախմբուելու՝ իբրեւ կազմակերպուած ու պահանջատէր ուժ, որ Արցախի հարցը կը պահէ օրակարգի վրայ՝ պաշտպանելով վերադարձի ու ինքնորոշման իրաւունքը, ռազմագերիներու ազատութիւնը եւ մեր մշակութային ժառանգութիւնը: Սեպտեմբեր 2-ի եւ 21-ի 35-ամեակին մեր տեսլականն է կերտել հզօր, արժանապատիւ, անկախ ու միացեալ Հայաստան մը:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ



Պետութիւն մը ե՞րբ կ'ոչնչանայ: Պետութիւն մը կ'ոչնչանայ, երբ ան կը կորսնցնէ իր տարածքը, կը տկարանան իր հաստատութիւնները, կը ծախողի իր դիւանագիտութիւնը, եւ ժողովուրդը կը դադոր իր պետականութեան մասին ռազմավարական կերպով մտածել:

Արցախի Հանրապետութեան հռչակման 35-ամեակը միայն անցեալը յիշելու առիթ չէ: Ան նաեւ առիթ է մտածելու պետականութեան, ազգային ռազմավարութեան եւ մեր սերունդին պատասխանատուութեան մասին: 2 սեպտեմբեր 1991-ին հռչակուեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, իսկ 10 դեկտեմբերին տեղի ունեցաւ անկախութեան հանրաքուէն: Հանրապետութիւնը, սակայն, չստացաւ միջազգային ճանաչում:

35 տարիներ ետք հիմնական հարցը միայն այն չէ, թէ ի՞նչ հռչակուեցաւ 1991-ին, այլ՝ ի՞նչ կառուցուեցաւ կամ չկառուցուեցաւ անկէ ետք, եւ ինչո՞ւ:

«Հռչակումը պետականութեան սկիզբն է, ոչ թէ՝ անոր ամբողջացումը»:

Պետականութիւնը միայն դրօշ, սահման կամ զինուորական յաղթանակ չէ: Ան հաստատութիւն, տնտեսութիւն, ժողովուրդ, դիւանագիտութիւն եւ անվտանգութեան երկար ռազմավարութիւն է: Ուստի պէտք է հարցնել. «Անկախութիւնը միայն իրաւո՞ւնք է, թէ՞ ինքնուրոյն գոյատեւելու կարողութիւն»:

1990-ականներու ռազմական յաջողութիւններէն ետք Արցախի հարցը ընկալեցի՞նք իբրեւ լուծուած խնդիր, երբ ան տակաւին միջազգային եւ քաղաքական չլուծուած հարց էր: Այս հարցումը մեղադրելու համար չէ, այլ՝ հասկնալու, որովհետեւ «յաղթանակը իրադարձութիւն է, իսկ յաղթանակի պահպանումը՝ համակարգ»:

2020-ի 44-օրեայ պատերազմը արմատապէս փոխեց իրավիճակը: Բայց միայն «ինչո՞ւ պարտուեցանք» հարցումը բաւարար չէ: Պէտք է հարցնել՝ արդեօք ռազմական պատրաստութիւնը համապատասխա՞ն էր պատերազմի փոփոխուած բնութիւն, եւ ազգային անվտանգութիւնը դիտաւ՞ծ էր իբրեւ ռազմական, քաղաքական, տնտեսական եւ դիւանագիտական ամբողջական համակարգ:

Սեպտեմբեր 2023-ին, ռազմական գործողութիւններէն ետք, Արցախի գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը բռնի տեղահանուեցաւ: Այդ իրողութենէն ետք հարցադրումները եւս փոխուեցան. ինչպէ՞ս պահպանել Արցախի հայութեան իրաւունքները, սեփականութեան փաստաթուղթերը եւ մշակութային ժառանգութիւնը: Գործնական իմաստով, ի՞նչ կը նշանակէ վերադարձի իրաւունք:

Միջազգային արդարադատութեան դատարանը 17 նոյեմբեր 2023-ին ժամանակաւոր միջոցներով հրահանգեց ապահով վերադարձի առիթ: Բայց այստեղ կը ծագի անելի խոր հարցում մը.

«Իրաւունք ունենալ եւ այդ իրաւունքը գործադրելու կարողութիւն ունենալը նոյն բա՞նն են»:

Ո՞վ պիտի պատմէ պատմութիւնը Այսօր Արցախի հարցը նաեւ պատմական եւ մշակութային ժառանգութեան հարց է: Սեպտեմբեր 2026-ին Ազրայէճանի իշխանութիւններուն դեպի բռնագրաւեալ Արցախ կազմակերպած այցելութեան ընթացքին օտար դիւանագետներ այցելեցին Գանձասար եւ Ղարաբաղ, ուր Ազրայէճանի նախագահի օգնական Հիքմէթ Հաճիեւ այս վանքերը ներկայացուց իբրեւ կոմկաւսեան-աղուանական քրիստոնեական ժառանգութեան մաս:

Գանձասարի մէջ ան պնդեց, որ վանքը ոչ թէ հայկական, այլ աղուանական է: Աւելին. ան նոյնիսկ ծաղրեց հայերը, երբ Գանձասարի մատենադարանի ցուցասրահին մէջ դիւանագետներուն ըսաւ, որ հոն հայերը ինչ

գիրքերու ցուցահանդէս կազմակերպած են, ապա՝ իբր թէ բանալով ձեռագիրներու հատոր մը, դիւանագետներուն ցոյց տուաւ այդ գիրքերուն դատարկ էջերը, իսկ դիւանագետները արձագանգեցին անհեթեթ ծծաւորով:

Գանձասարի ձեռագիրներուն շուրջ ստեղծուած վեճին մասին Մատենադարանը պարզաբանեց, որ այնտեղ ցուցադրուած ձեռագիրները վերաբոսագրութիւններ էին, իսկ բնագիրները կը պահպանուին Երեւանի մէջ:

Այս զարգացումները մեզի կը ներկայացնեն կարեւոր հարց մը.

Եթէ ժողովուրդ մը այլեւս ֆիզիքապէս ներկայ չէ իր պատմական միջավայրին մէջ, ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի պատմէ այդ տարածքին պատմութիւնը:

Հետեւաբար ձեռագիրներու, արձանագրութիւններու, եկեղեցիներու, խաչքարերու եւ արխիւներու ուսումնասիրութիւնն ու փաստագրումը կը դառնան ազգային անհրաժեշտութիւն:

Երբ պատմութիւնը կը վիճարկուի, արխիւը կը դառնայ ապացոյց, իսկ գիտելիքը՝ ժառանգութիւնը պահպանելու միջոց:

Այստեղ հարցը կը հասնի մեզի՝ երիտասարդութեան:

«Ազգային յիշողութիւնը ինքնին ռազմավարութիւն չէ»:

Արցախի մասին խօսիլը անհրաժեշտ է, սակայն միայն այդ բաւարար չէ: Անհրաժեշտ են՝ պատմաբաններ, դիւանագետներ, միջազգային իրաւունքի մասնագետներ, լրագրողներ եւ մշակութային ժառանգութեան հետազօտողներ: Երիտասարդութեան ազգային պարտականութիւնը միայն դիրքորոշում ունենալ չէ, այլ՝ կարողութիւն ստեղծել:

Եթէ երիտասարդական կառոյց մը միայն նոյն կարգախօսները կը կրկնէ, բայց չի պարտաստեր մասնագետներ, չի կատարեր հետազօտութիւն եւ չի մշակեր նոր գաղափարներ, արդեօք ան լիովին կը կատարէ՞ իր առաքելութիւնը:

Այս պատճառով Արցախի Հանրապետութեան հռչակման 35-ամեակը կարելի է ամփոփել մէկ հիմնական հարցումով.

«Մենք Արցախը միայն պիտի յիշենք, թէ՞ նաեւ պիտի ուսումնասիրենք»:

Մեզմէ առաջ եկած սերունդներուն համար Արցախը եղաւ պայքար, ազատագրական շարժում եւ պետականութեան կառուցում: Մեր սերունդը ժառանգեց նաեւ՝ պատերազմ, կորուստ, տեղահանութիւն եւ անորոշութիւն:

Մենք չենք կրնար փոխել այն, ինչը արդէն պատահած է: Բայց կրնանք որոշել, թէ ի՞նչ պիտի ընենք այդ պատմութեան հետ:

Պիտի բաւարարուի՞նք միայն Արցախի անունը կրկնելով, թէ՞ պիտի ուսումնասիրենք անոր պատմութիւնը, պահպանենք մշակութային ժառանգութիւնը, փաստագրենք ժողովուրդին փորձառութիւնը եւ փոխանցենք զայն յաջորդ սերունդներուն:

Արցախը մեր սերունդին համար միայն անցեալի պատմութիւն չէ:

Ան յիշողութիւն, դաս, պատասխանատուութիւն եւ ժառանգութիւն է:

Ուրեմն մեր խոստումը պէտք է ըլլայ միայն՝ «Մենք չենք մոռնար»:

Ան պէտք է ըլլայ նաեւ՝

«Մենք պիտի ուսումնասիրենք: Մենք պիտի պահպանենք: Մենք պիտի փաստագրենք: Մենք պիտի փոխանցենք»:

Շնորհաւոր՝ Արցախի Հանրապետութեան անկախութեան 35-ամեակը:

Արցախը պիտի ապրի նաեւ մեր միջոցով՝ մեր յիշողութեան, մեր գիտելիքին, մեր մշակոյթին եւ մեր պատասխանատուութեան մէջ:

ՅԱՐՈՒԹ ՄԱԿԵԱՆ
ՀՀԿԼԵՄ-ի «Ը. Մեղրեան» մասնաճիւղ

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 35 ՏԱՐԻՆԵՐԸ. Ի՞ՆՉ ԿԸ ՏՕՆԵՆՔ ԱՅՍՕՐ



2 սեպտեմբերը միշտ յատուկ նշանակութիւն ունեցած է մեզի համար: 2 սեպտեմբեր 1991-ին հռչակուեցաւ Արցախի Հանրապետութեան անկախութիւնը՝ արտայայտելով Արցախի հայութեան կամքը, ազատութեան ձգտումը, դիմադրութիւնը եւ հայրենի հողին վրայ ապրելու իրաւունքը:

Սակայն այսօր՝ 35 տարիներ ետք, 2 սեպտեմբերը կը յառաջացնէ ուրիշ զգացում մը: Կայ հարցում մը, որ դժուար է ուղղել, սակայն պէտք է համարձակիք տալ.

Ինչո՞ւ կը յիշենք Արցախի անկախութիւնը, երբ Արցախի Հանրապետութիւնը այլեւս գոյութիւն չունի:

Այսօր չենք կրնար խօսիլ Արցախի մասին այնպէս, կարծես թէ ոչ մէկ բան պատահած է: 2020-ի պատերազմէն ետք Արցախի կացութիւնը վատթարացաւ, իսկ 2023-էն ետք Արցախի հայութիւնը ստիպուեցաւ լքել իր տուները եւ իր նախնիներուն հողը: Աւելի քան հարիւր հազար հայեր հեռացան Արցախէն՝ իրենց ետին ձգելով տուններ, դպրոցներ, եկեղեցիներ, մշակութային կրթողներ եւ բազմաթիւ յիշատակներ:

Ուրեմն ի՞նչ կը տօնենք այսօր: Արցախը միայն կառավարութիւն, դրօշ կամ քարտէսի վրայ սահման մը չէ: Արցախը ժողովուրդ է, որ ապրեցաւ այդ հողին վրայ, կառուցեց դպրոցներ եւ դաստիարակեց սերունդներ: Արցախը տուն է, եւ այդ տունը այսօր դատարկ է:

Բայց Արցախի Հանրապետութեան կորուստը չի նշանակել, որ 2 սեպտեմբերը այլեւս իմաստ չունի: Մենք կը նշենք ժողովուրդին արդար կամքը՝ իր ճակատագիրը ինքնուրոյն կերպով որոշելու: Մենք կը յիշենք բոլոր անոնք, որոնք իրենց կեանքը զոհեցին այդ հողին համար:

Իսկ մեզի՝ երիտասարդներուն համար, այսօր մեր դերը, անելի քան երբեք, կարեւոր է:

Ոմանք երբեք չեն տեսած Արցախը, չեն քալած Ստեփանակերտի փողոցներուն մէջ, չեն ապրած Արցախի գիւղերուն մէջ: Անոնք Արցախի մասին շատ բաներու ծանօթ են լուսանկարներէն, պատմութիւններէն եւ հայրենակիցներու վկայութիւններէն:

Եւ ճիշդ այդ պատճառով մեր պատասխանատուութիւնը անելի մեծ է: Մենք այն սերունդն ենք, որ պէտք է յիշէ. սորով եւ փոխանցէ:

Պէտք է լսենք Արցախի ժողովուրդին պատմութիւնները, պահպանենք անոնք յիշողութիւնները եւ զանոնք փոխանցենք յառաջիկայ սերունդներուն: Անոնք պէտք է սորվեցնենք, թէ ի՞նչ է Արցախը, ոչ միայն իբրեւ քաղաքական հարց, այլ՝ ապրուած հայրենիք:

Երիտասարդութիւնը միայն ապագան չէ, երիտասարդութիւնը նաեւ անցեալի պաշտպանն է:

Եթէ մենք չիշենք, չտրվիք եւ չպատմենք, ուրիշներ կրնան մեր պատմութիւնը նենգափոխել:

Ուրեմն 2 սեպտեմբերը պէտք է ըլլայ ոչ միայն յիշելու, այլ նաեւ պատասխանատուութեան օր: Օր մը՝ հարցնելու, սորվելու եւ որոշելու, թէ մենք ի՞նչ պիտի ընենք մեզի ժառանգուած այս պատմութեան հետ:

Այնքան ատեն որ հայ երիտասարդ մը կը յիշէ, կը պատմէ եւ կը փոխանցէ Արցախի պատմութիւնը, 2 սեպտեմբերը պիտի շարունակէ իմաստ ունենալ:

Արցախը կորսնցուցիք իբրեւ տարածք, սակայն չենք կրնար ջնջել մեր յիշողութենէն:

ՄԻՐԷՅ ԺՄՍՏՕ
ՀՀԿԼԵՄ-ի «Ա. Շիրակեան» մասնաճիւղ

ԱՊՐՈՒԱԾ ՕՐԵՐ

Դ. ՊԷՅՐՈՒԹ, 70-ԱԿԱՆՆԵՐ



Պեյրույթը աւելի քան 5000 տարիէ ի վեր բնակեցուած է եւ աշխարհի հնագոյն քաղաքներէն մէկն է։ Իսկ մենք հոն ապրեցանք։

Վերի այս լուսանկարը առնուած է Եօթանասունականներու սկիզբը՝ լիբանանեան ամսագիրի մը համար։ Զեծանիւին վրայ ես եմ, կողքիս՝ քոյրս Մարիլուն, իսկ մեր մօտ կանգնած երիտասարդ կինը մօրաքոյրս՝ Մարիզն է։ Զժմ յիշեր լուսանկարիչին անունը, ոչ ալ թէ՛ ի՞նչ առիթով այդ օրը յայտնուեցանք ամսագիրի էջերուն մէջ։ Բայց նկարը մնացած է։ Այսօր, երբ կը նայիմ անոր, ընտանեկան հին լուսանկար մը միայն չեմ տեսներ։ Մարիզին հագուստը, լայն գօտին, մագերը, մեր հագուստները, հեծանիւս՝ բոլորը ժամանակաշրջանի մը մասին կը պատմեն։

Եօթանասունականներու Պեյրույթին մասին գրեթէ բոլորս նոյն պատկերները ունինք մեր մտքերուն մէջ։ Զամրան՝ իր սրճարաններով, «Ֆենիսիա» պանդոկը, «Քազիսօ տիւ Լիպան»-ը, Ռաուշէն ու ծովը։ Նախապատերազմեան Պեյրույթի այդ պատմութիւնը շատ անգամ պատմուած է։ Ես ալ կը յիշեմ այդ Պեյրույթը, բայց վերջերս ուրիշ բանի մասին կը մտածեմ։ Ի՞նչ էր այդ ոսկեդարը դեմ մանուկի մը աչքերով։ Եւ ի՞նչ ձգեց ան մէջս։

Այդ օրերու Պեյրույթը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ տեսակ մը հանդիպման վայր էր։ Տուպայը դեմ այսօրուան Տուպայը չէր։ Պեյրույթն էր տարածաշրջանի աշխարհին բաց քաղաքներէն մէկը։ Փոքր էր, բայց՝ միջազգային։ Արդիական էր, բայց տակաւին՝ արեւելեան։ Ֆրանսական ազդեցութիւնը, արաբական մշակոյթը, հայկական ներկայութիւնը եւ Միջերկրականի ազատ շունչը իրարու կողքին կ'ապրէին։ Զաղաքը աշխարհին հետ կապուած էր, բայց տակաւին մարդկային չափեր ուներ։

Ինծի համար այդ բոլորը բնական էր։ Զասակ նետող հայ մանուկ մըն էի, հայկական ընտանիքի, դպրոցի, եկեղեցւոյ, ակումբի, բարեկամներու եւ ազգականներու աշխարհին մէջ։ Պուրճ Զամուտը իր ամբողջ կեանքով մեր աշխարհին մէկ մասն էր։ Բայց այդ հայկականութիւնը պատ մը չէր, որ մեզ քաղաքէն բաժնէր։ Միաժամանակ կը պատկանէիք աւելի լայն լիբանանեան կեանքին։ Էշրեֆիէն, Ժըմմէյզէն, Պուրճ Զամուտն ու Զամրան տարբեր աշխարհներ էին, բայց մեզի համար նոյն քաղաքին մաս կը կազմէին։ Կրնայինք առտուն հայկական միջավայրի մը մէջ ըլլալ, կէսօրէ ետք ուրիշ թաղի մը մէջ, իսկ շաբաթավերջին՝ լեռ կամ ծով։

Լեզուներն ալ իրարու կը խառնուէին։ Զայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն, երբեմն ալ՝ քրտերէն։ Մէկը կը լսէիր տան մէջ, միւսը՝ փողոցը, ուրիշ մը՝ դպրոցը, խանութը կամ ձայնասփիռէն։ Այդ տարբերութիւնները բացատրելու կարիք չկար։ Մենք բազմաշաղկապյալութիւն բառը չէինք գործածեր։ Պարզապէս այդպէս կ'ապրէիք։

Ամառները երբեմն գիւղ կ'երթայինք՝ Մրուժ կամ Տիուր Շուէյր։ Ամրան աւարտին Մար Թաքլայի տօնը կ'ըլլար, եւ գիւղին հրապարակին վրայ մեծ տօնավաճառ մը կը բացուէր։ Ամէն տեսակ անուշեղէն կար, իսկ մեզի՝ մանուկներս համար, ամենէն սպասւածը հրավառութիւնն էր։ Երբեմն կիրակի օրերը Տիուր Շուէյրի մէջ երգիչ Ասիսը մանուկներու յատուկ ծրագիր կ'ունենար։ Երբ «Գարուն, գարուն»-ը կը սկսէր, բոլորս պարելու կ'ելլէինք։ Այդ օրերէն շատ բան չեմ յիշեր, բայց երգը մնացած է։ Զամերն ու հոտերն ալ այդ Պեյրույթին մէկ մասն էին։ Կը յիշեմ



Հանտուրի «Ռաս Էլ Ապըտ»-ը (գիտեմ, այսօր այլեւս այդպէս չի կոչուիր) շոքոլայով պատուած փափուկ քաղցրաւենիքը, «Զիլլէթս»-ի փոքրիկ տուփերով ծամոնները, արեւելեան պաղպաղակի եւ փախլաւայի խանութները (մասնաւոր՝ «Ղազ Էլ պանեթը»), ճեմարանին մօտ Ժանին հայկական լեռնեցունի փուռի հոտը։

Երբեմն՝ տաք սահլապ մը, շաբաթավերջին՝ **քնեֆէ** կամ **մաւաքիշ**։ Գիւղի սնուցարի ծառերու հոտը, Չմմառու վանքի գինիի մառանի խոնաութեան հոտը։ Մանկութեան պարզ համեր ու հոտեր էին, որոնք մասին այն ատեն շատ չէինք մտածեր։ Տասնամեակներ անցած են, շատ բան փոխուած է, բայց այդ համերուն կարօտը չէ անցած։

Թերեւս այդ Պեյրույթի ինծի տուած կարեւորագոյն բաներէն մէկը ճիշդ ա՛յդ էր։ Առանց գիտակցելու՝ սորվեցայ, որ մարդ կրնայ մէկէ աւելի աշխարհի պատկանիլ՝ առանց անուցմէ մէկը կորսնցնելու։ Կարելի էր հայ ըլլալ եւ միաժամանակ ուրիշներուն աշխարհով հետաքրքրուիլ։ Տարբերութիւնը վտանգ չէր։ Երբեմն նոյնիսկ հետաքրքրութիւն էր։ Միայն տարիներ ետք հասկցայ, թէ մանկութեան այդ բնական փորձառութիւնը որքան խոր կերպով գիւ ձեւաւորեց։

Կային նաեւ հայկական կեդրոնները։ Պուրճ Զամուտը՝ իր նեղ փողոցներով եւ վառվռուն կեանքով։ Երբեմն «Քամ պեթ» Վարուժին ըով պատառ մը ուտելու կ'երթայինք։ Զոն անպայման կարեւոր մարդիկ նստած կ'ըլլային։ Երբեմն ալ՝ նահապետի ընկեր Աբուն ու ընկերները։



Արաքս փողոց, Պեյրույթ

Կային մեր ակումբները։ Զաղաքի ԶԱՄՍ-ը՝ իր սկսուտական եւ մարզական կեանքով, «Սարդարապատ» եւ «Արա Երեւանեան» ակումբները՝ իրենց քաղաքական կեանքով։ Եւ անշուշտ «Տէր Մելքոնեան» թատերասրահն ու ուրիշ կեդրոններ՝ իրենց մշակութային կեանքով։ Այս բոլորը պարզապէս վայրեր չէին։ Անոնք մաս կը կազմէին այն աշխարհին, ուր մենք կը մեծնայինք։

Պեյրույթը նաեւ աշխարհի դուռ մը կը բանար մեր առջեւ։ Օդանաւեր կու գային ու կ'երթային, օտար թերթեր ու ամսագիրներ կը հասնէին, նոր երաժշտութիւն, նոր հագուստ, նոր ժապաւեններ եւ գաղափարներ կը շքրէին քաղաքին մէջ։ Աշխարհը հեռու չէր թուեր։ Կարծես մեր փոքր քաղաքէն կարելի էր ամէն տեղ հասնիլ։

Այսօր կրկին կը նայիմ լուսանկարին։ Մարիզը, Մարիլուն։ Ես՝ հեծանիւս վրայ նստած։ Զիմա կը նայիմ ու կը հասկնամ, որ Պեյրույթի ոսկեդարուն վերջին տարիներն էին։ Բայց մեզի այն օրը պարզապէս սովորական օր մըն էր, կեանքի մը մէջ, որ բնական ու մնայուն կը թըլեր։ Զէիքը գիտեր, որ շուտով ամէն ինչ պիտի փոխուէր։



Պեյրույթի Զորնիշը, 1970: Աղբիւր՝ Wikimedia Commons:

Եւ աւա՛ր, այդ 70-ականներու Պեյրույթը վաղուց չկայ այնպէս, ինչպէս մենք ճանչցանք զայն։ Ճիշդ է, կեանքի մէջ ամէն ինչ կը փոխուի, բայց մեզի պատահածը պարզ փոփոխութիւն չէր։ Աշխարհի մը, որուն շարունակութիւնը բնական կը թուէր, յանկարծ վերջ գտաւ։ Մեր կեանքին մէջ գիծ մը քաշուեցաւ՝ անկէ առաջ եւ անկէ ետք։

ԴԱՅՖԻ ԱՐՏԱԼԾԵԱՆ
Շար.ը՝ էջ 6

«ԵՐԲԵՄՆ ԷՐԻԿ ՄԱՐԴ ՊԻՏԻ ԸԼԼԱՍ»



ԼՕՍ-ի բարեսիրական ծրագիրներուն մէջ տարիներ շարունակ շաբաթը երկու օր տաքուկ ճաշ կը տրամադրէիք կարիքաւոր ու անտէր տարեցներու։ Այս մարդասիրական նախաձեռնութիւնը կը շարունակուի մինչեւ օրս։ Սակայն այդ օրերը ինծի համար միայն ճաշ բաժնելու օրեր չէին։ Անոնք դարձած էին մարդկային հանդիպումներու փոքրիկ աշխարհ մը, ուր ամէն մէկ տարեց իրեն հետ կը բերեր կեանքի մը պատմութիւնը երբեմն ժպիտով, երբեմն լուրջեամբ, իսկ երբեմն ալ՝ արտին մէջ կուտակուած վիշտով։ Կը նստէի անոնց ըով, կը լսէի, որքան ալ պարզ ըլլար պատմութիւնը, ինծի համար երբեք պարզ չէր, որովհետեւ երբ տարեց մը կը խօսի, ան միայն այսօրուան մասին չի խօսիր, անոր բառերուն ետին կայ կեանքի մը ամբողջ ճանապարհը։

Այդ յուշերուն մէջ յատուկ տեղ մը ունին Սերոր աղբարն ու անոր կինը՝ Սրբուկը։

Ութսունհինգ եւ իննսուն տարեկան ամբողջ կեանք մը միասին անցուցած էին։ Տարիներու արեւն ու անձրեղ միասին դիմաւորած, ցուն ու ուրախութիւնը բաժնած, միշտ իրարու կողքին։

Ամէն անգամ իրարու ձեռք բռնած՝ ճաշարան կու գային։ Սերոր աղբարը անցեալին գինւորական եղած էր։ Առոյգ էր, ծայրը տիրական։

Երբեմն իրենց ըով կը նստէի։ Կը պատմէին հին օրերէն, ու իրենց աչքերուն մէջ կ'երեւէր այն ուրախութիւնը, գոր հարց կ'ունենայ, երբ կը զգայ, թէ տակաւին կայ մէկը, որ իր պատմութիւնը լսելու պատրաստ է։

Մինչեւ այն օրը... Սերոր աղբարը միևնա՛կ մտաւ սրահ։ Դեմքը մռայլ էր, գլուխը կախ։ Սրբուկը քիչ մը ետունէն ելաւ։

- Սերոր աղբա՛ր, ուր է ժպիտդ, բարեւդ ո՞ւր մնաց,- հարցունցի։ Պատասխան չկար։
- Գացի Սրբուկին։
- Մամի՛կ, ի՞նչ եղաւ։ Նեղուած ըսաւ։
- Զէն ենք իրարու հետ։ Չիս վիրաւորեց։ Ա՛լ իրաւուն հետ պիտի չխօսիլք։

Սիրե՛մ, կարծես մանուկներ էին, իսկ պատճառը այնքան փոքր էր, որ առաջին պահուն չգիտցայ՝ ծիծաղի՛մ, թէ՛ տխրիմ։ Սրբուկը Սերոր աղբարին մուճակը հագած էր, որովհետեւ աւելի հանգիստ էր։ Սերոր աղբարը ուրիշ մուճակ մը ուներ, բայց այդ օրը իր մուճակը կարծես իր արժանապատուութեան հարցը դարձած էր։

Ձայնը բարձրացուցած էր, Սրբուկն ալ մինչեւ իրիկուն լացած էր։

- Վա՛յ, մամիկ ջան...- Դարձեալ արցունքն ալ գործի լծուեցաւ։

Բայց այս անգամ գործս դիրին չէր։ Մեր գինւորը անդորոյնէի էր։ Ո՛չ մէկ զիջում։ Ո՛չ մէկ բառ։ Երկու անձեր, որոնք ութսունհինգ եւ իննսուն տարեկանին դեռ իրարու ձեռք բռնած կու գային, ինչպէ՛ս պիտի ապրին իրարու ըով՝ իրարու հետ խօսելով։

Անկարելի էր. որոշեցի այդ «պատերազմ»-ին վերջ տալ։

Երեք օր շարունակ մէկուն հետ խօսեցայ, միւսին հետ բանակցեցայ։ Սրբուկը իրաւացի էր, Սերոր աղբարը՝ ինքն ալ իրաւացի։ Ամէն մէկը իր փոքրիկ ճոշմարտութիւնը ուներ, եւ երկուքն ալ վճռած էին, որ առաջին քայլը իրենք պիտի չառնէին։

- Թող ինքը խօսի,- կ'ըսէր Սրբուկը։
- Ես ինչո՞ւ խօսիմ, ինքը թող գայ,- կ'ըսէր Սերոր աղբարը։

Ես ալ՝ մշտեղը խաղաղարար մը, որուն ոչ ոք զի-նաղաղար շնորհած էր։

Ա՛լ ճարահատ՝ Սերոր աղբարին ըսի. - Աղբա՛ր, այսքան տարի միասին ապրեցաք, այսքան բաներէ անցաք... հիմա մէկ մուճակի համա՛ր պիտի լռեք։

Բարկացած էի, ճարահատ՝ ձայնս քիչ մը խստացուցած էի։

- Լռեց։
- Մամի՛կ, թող այս անգամ կարծէ, թէ ինք յաղթեց։
- Չէ՛, ես ալ յամառ եմ։

Այդ պահուն հասկցայ, որ այս երկուքը իրարու համար ստեղծուած էին նոյնիսկ իրենց յամառութեամբ։

Երկար խօսակցութիւններէ եւ քանի մը «ես չեմ երթար»-ներէ ետք, ճարահատ՝ յանկարծ հրաշքը եղաւ։

Նայեցան իրարու։ Առաջին քայլը ո՞վ ըրաւ չեմ գիտեր։ Բայց քիչ ետք երկու ձեռքեր դարձեալ իրարու մէջ էին։

Եւ ես կողքէն, կարծես երկար պատերազմէն ետք խաղաղութեան դրօշը տեսած ըլլալի, խորունկ շունչ մը քաշեցի։

Զաշտութիւնը պէտք էր նշել։ Երեքով պաղպաղակ կերանք։

ՇԱԶԷ Զ. ԳԱՐԱՅԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱ՛Յ...

Շարունակուած 3-րդ էջէն

Եւ ստեղծել շինծու տորերը:

Կարելի է վիճիլ Դաշնակցութեան այսօրուան քաղաքական դիրքորոշումներուն շուրջ, բայց կարելի չէ ջնջել Քրիստափորի, Ռոստոմի, Սիմոն Չաւարեանի, Արամ Մանուկեանի, Սողոմոն Թեկիորեանի եւ հազարաւոր նուիրեալներու պատմական հետքը:

Այսօրուան քաղաքական խօսքը վաղը պիտի դառնայ պատմութեան փաստաթուղթ, եւ ապագայ սերունդները պիտի կարդան ոչ միայն այն, թէ ո՛վ ի՛նչ ըսաւ խորհրդարանի ամպիոնէն, այլ նաեւ՝ թէ այդ խօսքերուն դիմաց ժողովուրդը ի՛նչ հակազդեցութիւն ունեցաւ:

Մեր պատասխանը, հետեւաբար, պէտք չէ ըլլայ համապատասխան ատելութիւնը:

Մեր պատասխանը պէտք է ըլլայ աւելի մեծ ու նուիրական գործը:

Աւելի ամուր կազմակերպուածութիւնը, խոր ազգային գիտակցութիւնը:

Աւելի բարձր բարոյականութիւնը, եւ, աւելի՛ն, նուիրական ծառայութիւնը, եւ ամենէն առաջ՝ հայրենիքի ու հայ ժողովուրդին հանդէպ անսակարկ նուիրումը:

Որովհետեւ ժամանակը կը սահի՝ իշխանութիւնները կը փոխուին, պաշտօնները կ'աւարտին, քաղաքական կարգախօսները կը մոռցուին, բայց ժողովուրդներու պատմութեան մէջ կը մնան գործը, գոհաբերութիւնն ու գաղափարը:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱ՛Յ ՈՒ ԿԸ ՄԱՒՅ, եւ մեր պատասխանը եղած է ու կը մնայ՝ Դաշնակցութեան պատմութիւնը չի ջնջուիր, Դաշնակցութեան գաղափարը չի մարիր, Դաշնակցութեան արմատները արմատախիլ չեն ըլլար, որովհետեւ այդ արմատները մէկ անձի մէջ չեն՝ ո՛չ մէկ պատգամաւորի, ո՛չ մէկ դեկաւարի եւ ո՛չ մէկ սերունդի մէջ: Այդ արմատները

հայ ժողովուրդի մէկ դարու եւ աւելի պատմութեան մէջ են:

Եւ քանի դեռ հայ ժողովուրդը կը յիշէ իր նահատակները, կը սիրէ իր հայրենիքը, կը խօսի իր մայրենի լեզուն, կը պահէ իր ազգային արժէքները եւ կը ձգտի ազատ ու արժանապատիւ Զայաստանի մը, պատմութիւնը չի կրնար արմատախիլ ըլլալ:

Այսօր ոմանք կրնան յայտարարել, թէ Դաշնակցութիւնը պէտք է ըլլայ արմատախիլ:

Բայց պատմութիւնը ուրիշ բան կը վկայէ:

Վերջին որոշողը խորհրդարանի քաղաքական ամպիոնը չէ: Վերջին որոշողը պատմութիւնն է, եւ պատմութիւնը տակաւին կը շարունակուի:

Զայաստանի երկնակամարին տակ եռագոյնը կը ծածանի, եւ այդ եռագոյնին կողքին, անկախ Զայաստանի երկնակամարին տակ, Դաշնակցութեան դրօշն ալ կը շարունակէ կրել իր պատմական երթն ու պատգամը:

Զայ ժողովուրդի յիշողութեան մէջ նահատակներու անունները կը մնան:

Ոչ ոք կրնայ տապանաբար դնել կենդանի գաղափարի մը վրայ՝ ո՛չ այսօր, ո՛չ վաղը: Ո՛չ ալ կրնայ վաղուան սերունդներու անունով Դաշնակցութիւնը արմատախիլ ընել անոնց մտքէն ու խորհուրդներէն:

Ուստի մեր խօսքը պարզ է, մեր հաւատքը՝ անսասն, իսկ մեր երթը՝ միշտ դէպի յառաջ:

Դաշնակցութիւնը կայ՝:

Դաշնակցութիւնը կը մնայ՝

Եւ աւելի՛ն. Դաշնակցութիւնը պիտի շարունակէ ծառայել սփիւռքին, բռնի տեղահանուած արցախահայութեան, հայրենիքին ու ազգին՝ այսօր եւ միշտ:

Թորոնթօ, 19 սեպտեմբեր 2026

«ԵՐԲԵՄՆ ԷՐԻԿ ՄԱՐԴ ...»

Շարունակուած 5-րդ էջէն

Այդ պաղպաղակը մինչեւ այսօր քաղցր է յիշողութեանս մէջ:

Յաջորդ օրը նոյն գոյգը սրահ մտաւ:

Նոյն ձեռքերը իրարու մէջ:

Նոյն ժպիտը իրենց դէմքերուն:

Ես ալ հեռուէն նայեցայ ու ժպտեցայ:

Քիչ ետք Սերոբ աղբարը կամացուկ մը մօտեցաւ ինծի, գլուխը հակեց ականջիս եւ փսփսաց.

- Է՛հ... երբեմն երիկ մարդ ըլլալդ ցոյց պիտի տաս: Ես յաղթեցի:

Աչքերուն նայեցայ եւ թեթեւ ժպտեցայ:

Այդ մէկ նախադասութիւնը մնաց մտքիս մէջ:

Որքա՛ն տարօրինակ է մարդ արարածը:

Կեանքի մեծ ցատքը միասին կրած երկու հոգի կըրտան երեք օր լռել մէկ մուճակի մը պատճառով: Բայց նոյն այդ մարդիկը, իրենց տարիքին բոլոր աշունները

ապրած, տակաւին ունին այն պարզ կարողութիւնը իրարու ձեռք երկարելու:

Այդ օրը սիրտս խաղաղ տուն վերադարձայ, եւ ինծի հետ տուն եկաւ նաեւ այդ տեսարանը՝ երկու ծեր ձեռքեր, որոնք դարձեալ զիրար գտած էին:

Այդ պահուն մտածեցի, որ թերեւս երկար տարիներ միասին ապրիլը միայն կողք կողքի ծերանալ չէ:

Կեանքի ամբողջ իմաստը երբեմն այն է, որ վերջին տարիներուն ալ կողքիդ եղող ձեռքը չկորսնցնես:

Իսկ Սերոբ աղբարին համար, անշուշտ, պատմութիւնը ուրիշ վերջ ունի՝ ինքը յաղթած էր:

Թող այդպէս կարծեր...

Ես գիտիի, որ այդ օրը յաղթողը ո՛չ Սերոբն էր, ո՛չ Սրբուկը:

Յաղթած էր ՍԵՐԸ:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՒԿԱԿՆ

- Կրծող փոքր կենդանի - Լուսաւորիցի հայրը:
- Փաջիտանի զետեւէն - Նեղ բացուածք:
- Վշտակից - Սաճիլ:
- Տարիչ - Անյայտ:
- Ձայնակից գիւրեր - Միջօրէ:
- Ասիական ուսար - Անձնական դերանուն:
- Կատուազգի բազան - Կրկնուած բաղաձայններ - Փոքր:
- Կարճահասակ - Բիծ:
- Աղբատեր ճճի - Գեղատեսիլ տերերներով թոյս (իսկ):
- Կաթիլներ - Ասիական երկիր:
- Դրկից տաւեր - Յունական դիցարանի պստերազլի աստուածը - Անցած:

ՈՐՈՂԱՅԹԵԿՅ

- Հասկի փշուտ մազ - Ձայնանիշ - Մասնուսկր:
- Մարտունիի գիւղերէն - Կործանում:
- Իգական օտար անուն - Չոր ընկոյզի լման միջուկը:
- Հայրը կաթողիկոս՝ Անանիա Ա. - Մարդաբնակ (իսկ):
- Նիհար - Բաներ:
- Հրացանաձգութիւն (իսկ) - Այբուբենին:
- Տառի մը անունը:
- Հայկական Տապոսի լեռներէն - Ասակին նախորդ օրը:
- Օճառայի ուր (իսկ) - Լեզունական ռազմա վայր:
- Յարմար - Աստուածային:
- Շնիլ - Ամբողջ սրտով:

Պատրաստեց՝ **S. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ**

ՍՈՒՏՈՔՈՒ

	9	6		7		8	1
4						2	
			3		2		
		9					6
7			1	4		5	
		8	6			4	
7			2		5		
3	6						8
					1	5	3

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գնացանք բաղկացած է իւրաքանչիւր 9 թատկուսի հաջուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր թատկուսի մէջ թուանշան մը զետեւէ՝ սպմայն մը, որ իրիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 թատկուսիմոց իւրաքանչիւր բաժին ունեայ ձեւ 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ իսպառով՝ ո՛չ մէկ պարագայի ստուծուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ թատկուսիմներում մէջ զետեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՄ ՆՈՒԾՈՒՄՆԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Ո	Ղ	Ն	Ա	Մ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ
2	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա
3	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա
4	Ս	Ո	Ղ	Ն	Ա	Մ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ
5	Ս	Ո	Ղ	Ն	Ա	Մ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ
6	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա
7	Վ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա	Ջ	Ա	Ջ	Ա
8	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա
9	Ս	Ո	Ղ	Ն	Ա	Մ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ
10	Ս	Ո	Ղ	Ն	Ա	Մ	Ս	Ա	Ջ	Ա	Ջ
11	Բ	Ե	Դ	Վ	Ա	Ս	Ա	Ջ	Ա	Ջ	Ա

«ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ...»

Շարունակուած 3-րդ էջէն

կարեւորութեամբ անդրադարձաւ սեպտեմբեր 2023-ի սկիզբը Լեմքինի հիմնարկին հրապարակած 128 էջերէ բաղկացած տեղեկագրին, ուր ցոյց տրուած էր Ալիեւի վարչակարգին ցեղասպանական մտադրութիւնները: Անդրադառնալով միջազգային ընտանիքին ցնցիչ լուրերէն՝ Վոն Եոյտեն-Ֆորկի ըսաւ, որ այս իրողութիւնը մտածել կու տայ, թէ ժամանակակից աշխարհը ինչպէ՛ս կրնար տարբեր ըլլալ, եթէ միջազգային ընտանիքը լուռ չմնար:

Եւրոպական խորհրդարանի երեսփոխան Մարիսա Մեզուր Ներկայացուց «Միջազգային ընտանիքին պատասխանատուութիւնը՝ արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան առնչուած» նիւթը: Ան յիշեց 2026-ին Զայաստան այցելութեան ընթացքին արցախցի գաղթականի մը խօսքը, թէ՝ «Մեզ մի՛ մոռնաք»: Մեզուր ընդգծեց, որ արցախցիներու վերադարձի իրաւունքին գծով Եւրոպական Միութեան գործադիր իշխանութեան քայլերը տակաւին չեն համապատասխաներ միութեան սկզբունքներուն եւ արժէքներուն՝ հարց տալով, թէ Եւրոպական յանձնաժողովը եւ Եւրոպական խորհուրդը ե՛րբ գործի պիտի անցնին:

Արցախի Զանապետութեան Մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեանի նիւթը եղաւ՝ «Արցախահայութեան իրաւունքները՝ իբրեւ

Զայաստան տեղահանուածներ եւ անոնց վերադարձի իրաւունքը»: Ստեփանեան համապարփալօրէն ներկայացուց Զայաստան ապաստանած արցախցիներու կեցութեան եւ այլ պայմանները՝ զգուշացնելով, որ մինչ անմիջական օժանդակութիւնները բաւական կրճատուած եւ իրողապէս վերջ գտած են, արցախցիները սուր կարիքը ունին մարդասիրական եւ ընկերային նեցուկի ու օժանդակութեան: Ան ահագանգ ինչեցուց, թէ շուրջ 25 հազար արցախցիներ արդէն իսկ Զայաստանէն հեռացած են եւ շէշտեց, որ առանց նշանակալից զօրակցութեան՝ աւելի ու աւելի արցախցիներ պիտի զգան, թէ այլ երկիրներու մէջ արժանապատիւ կեանք փնտռել այլ ընտրանք չունին:

ՀԱՆԴԻՊՈՒՄԵՆ ԲԽԱԾ ՊԱՏՃԱՆԵՐԸ

Ա.- Վերադարձի իրաւունքի ապահովում,

Բ.- Միջազգային հսկողութեան մեքանիզմի գործարկում,

Գ.- Կալուածներու վերատիրացում եւ հատուցում,

Դ.- Մշակութային ժառանգութեան պաշտպանութիւն,

Ե.- Զանուետութիւն եւ լուծումներ,

Զ.- Կիներու եւ մանուկներու իրաւունքներու պաշտպանութիւն,

Է.- Երկարաժամկետ կայունութիւն,

Ը.- Ինքնութեան պահպանում:

Դ. ՊԷՅՐՈՒԹ...

Շարունակուած 5-րդ էջէն

Բայց թերեւս ամէն սերունդ իր Պէյրուօը ունեցած է: Մեր տեսած ոսկի Պէյրուօն ալ մեր որբ ու գաղթական մեծ հայրերուն Պէյրուօը չէր: Անոնք իոն հասած էին չարչարանքէ ու կորուստէ ետք եւ իրենց համար քաղաքը նախ վերապրելու ու նոր կեանք կառուցելու վայր եղած էր: Մեր սերունդը արդէն ուրիշ Պէյրուօ մը ժառանգեց՝ աւելի բարգաւաճ ու բաց: Բայց պատմութիւնը կարծես կրկին հասաւ մեզի: Քանի մը տասնամեակ ետք մենք ալ սկսանք հեռանալ ու ցրուիլ այն քաղաքէն, որ շատերուն ապաստան եղած է:

Երբեմն կը մտածեմ, թէ այդ Պէյրուօն որքա՛ն բան մնացած է մեզս: Տարբեր աշխարհներու մէջ հանգիստ զգալը, տարբեր մշակոյթներու հանդէպ հետաքրքրութիւնը, աշխարհաքաղաքացիի այդ շունչը, հայ մտալով հանդերձ, ուրիշին աշխարհին բաց ըլլալը:

Քաղաք մը փոխուեցաւ: Մանկութիւն մը անցաւ: Բայց անոնցմէ բան մը ձգի հետ մնաց:

Ու երբեմն, երբ կ'այցելեմ Լիբանան, վայրկեանուան մը համար ինքզինքս կըրկին իոն կը գտնեմ: Նոյն ձայները կը լսեմ, նոյն հոտերը կու գան, նոյն ծովը դիմացս է: Բայց շուրջս այլեւս նոյն աշխարհը չէ:

Եա՛ր Պէյրուօ...

Այս յօդուածաշարքին նախորդ գրութիւնները
Բ.- Կեիպոյի Տուն Թիւ 54 <https://www.aztagdaily.com/archives/702461>
Բ.- Մեծ Զօրս Մեծ Հին Ռատիոն <https://www.aztagdaily.com/archives/703467>
Գ.- Կիւզել Պոլիսն Ու Մեծ Մայրս <https://www.aztagdaily.com/archives/703889>

ՄՍԱՅԱՆՔ

ՍՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, ՆԻԿՈՍԻԱ 40-ԱՄԵԱԿ - 1981-2021
Հայերէն, յունարէն եւ անգլերէն

ԱՌԱՋԱՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԿԻՊՐՈՍԻ 2024

ՄՍԱՅԱՆՔ

ARMENIAN IMMIGRANTS FROM MUSA DAGH IN THE UNITED STATES
A Photographie Collective Biography
VAHRAM L. SHEMMASIAN
Yerevan 2026

ՕՐԱՏԵՏՐ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ

- 1888.- Խորեն արքեպիսկոպոս Աշնգեան Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի:
- 1929.- Մահ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի, Երեւանի մէջ: Ծնած էր 1864-ին, Վաղարշապատ:
- 1951.- Մահ գրականագէտ Հայկ Գիւլբեկիսանեանի, Երեւանի մէջ: Ծնած էր 1886-ին, Շուշի:
- 1966.- Մահ դաստիարակ եւ հանրային գործիչ Ղազար Զարբգի, Պէյրուօի մէջ: Ծնած էր 1890-ին, Կարին:
- 2001.- Մահ Մուսաբեկ Վարդան Մուսախանեանի, Երեւանի մէջ: Ծնած էր 1919-ին, Երեւան: Հեղինակ է գիտական շուրջ քսան աշխատութիւններու:
- 2015.- Մահ ջութակահար Ժան Տեր Մերկերեանի, Մարսելի մէջ: Ծնած էր 1935-ին, Մարսել:
- 2020.- Մահ Արցախի Զանապետութեան պաշտպանութեան բանակի մարտի, Արցախի հերոս Դաւիթ Ա

ՈՒՐԱՆ 2026

ՍԱԺԵՍ ՅԱՂԹԵՑ ԿՈՐԿԱՆԻՆ՝ 103-97 ԱՐԴԻՒՆԶՈՎ

Ուսալի «Ֆայնը 8»-ի մրցումներու ծիրին մէջ, Սա-ժես 103-97 արդիւնքով պարտութեան մատնեց Իրա-նի Շահրուարի Կորկանը:

Ամերիկացիներ Տեշնտրէ Ուաշինկթըն, Ժամալ Ճոնզ եւ Էյ. Ճէյ. Ինկլիշ բաւական լաւ ելոյթ ունեցան Եուսէֆ Խայեաթի, Ժերար Զատիտեանի, Ալի Մըզհե-րի, Զարիմ Իզետտինի, Ճօ Ապի Խերեսի եւ Մարք Խայեաթի կողքին:

Ուաշինկթըն 27 կէտ եւ 10 ռիպաուստ ձեռք ձգեց, մինչ Ճոնզ՝ 25, Խայեաթ՝ 19 եւ Զատիտեան՝ 18 կէտեր նշանակեցին ի նպաստ Լիքանանի փոխախոյեան Սաժեսին, որ այսօր պիտի մրցի Սեուտական Արա-բիոյ Ալ Օլա խումբին դէմ: Իր առաջին մրցումին Օլա 96-72 արդիւնքով հանգիստ յաղթանակ մը արձա-նագրած էր Զաթարի Արապի խումբին վրայ:

Աստրալիացի Միշէլ Զրեք 22 կէտ եւ 16 ռի-պաուստ ձեռք ձգեց, մինչ Էլայա Սթիւըրթ թրիփը տապըլէ զրկուեցաւ 1 էսիսթով: Ան 22 կէտ, 10 ռի-պաուստ եւ 9 էսիսթ ձեռք ձգեց: Ֆրանսացի Տալիտ Մի- շինս 17 կէտ նշանակեց:

Արապիի լաւագոյն մարզիկն էր Ռիատիի Նախկին սենթըր Էլմետին Զիքանովիչ, որ 21 կէտ եւ 9 ռի-պաուստ ձեռք ձգեց:

Վերադառնալով Սաժեսի մրցումին, Իրանի խում-բին հետ ելոյթ ունեցաւ ԶԱԸՄ-ի Նախկին մարզիկ Ճորտըն Սթիւնզ, որ 22 կէտ նշանակեց 6 էսիսթնե-րու կողքին: Ամերիկացի Տ'անճելօ Զերիսըն 31 կէտ անշուք, մինչ սերպ Սթեֆան Եանքովիչ 23 կէտ եւ 9 ռիպաուստ ձեռք ձգեց:

«ԷՆ.ՊԻ.ԷՅ.»

ՎԵԹԵՐԱՆ ԲԱՅՐԻ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

Տալաս Մետրիքսի վեթերան աստղ Զայրի Ըրվինկ անցեալ շաբաթավերջին յայտնեց, որ ֆիզիքական առումով շատ լաւ կը զգայ եւ պիտի վերադառնայ 19 ամիս հեռու մնալէ ետք՝ ծուկի ետեւի կապաններու վիրաբուժութեան («Էյ.Սի. Էլ.») պատճառով:

«Պատրաստ եմ յաղթանակներ կերտելու: Գիտեմ, որ շատ մարդիկ կը կասկածին, թէ ո՛ր պիտի ըլլամ այս տարի, բայց ասիկա կ'ուզեմ ըսել, որ պիտի ելնայ ինքնավստահութիւն ունիմ: Անհամբեր կը սպասեմ կապելու մարզական կօշիկի կապերս՝ դաշտ ներկա-յանալու համար խմբակիցներուս հետ եւ ցոյց տալու համար, թէ ինչ կրնամ ընել: Դեժանի վարելու նման դիւրին է» ըսաւ 34 տարեկան Ըրվինկ:

Ըրվինկ յայտնեց, որ 19 ամիսները իրեն պար-տադրեցին կեանքը այլ ձեւով տեսնել: «Թէ ո՛ր կ'ու-զեմ ըլլալ իբր մարզիկ եւ կարելորագոյնը՝ իբրեւ մարդ: Ինչպէ՛ս մարդիկ ինծի կը նային իբրեւ առաջ-նորդ. աւելի զգայուն: 34 տարեկան ըլլալով իմ 16-րդ տարեշրջանս պիտի ըլլայ: Բայց նոյնիսկ բոլոր վերի-վայրումներով հանդերձ, իմ պայքարելու ոգիս եւ դաշտին վրայ դնելիք ճիգս բնաւ կասկածի առարկայ պէտք չէ ըլլան», անցուց Ըրվինկ:

Տալաս անցեալ եղանակին ունեցած էր 26-56 ար-դիւնքով բաւական ծախող տարեշրջան մը, որ վեր-ջին 8 տարիներու ամենէն վատն էր:

Խումբը այժմ նոր նախագահ ունի՝ Մասայ Ուե-րի, անցեալ մայիսէն ի վեր, եւ նոր մարզիչ՝ Սասթի Մէյ, որ փոխարինեց Ճէյսըն Զիտը:

Մէյ, որ Միշիկընի հետ «ԷՆ. Սի. Էյ.Էյ.»-ի (Համա-լսարաններու) պիտեան դարձած էր, դարձաւ առա-ջին մարզիչը, որ համալսարաններէ ուղղակի «ԷՆ.Պի. Էյ.»-ի գլխաւոր մարզիչի պաշտօնին հասած



Էր:

Վերջին անգամ ճոն Պէյլին Միշիկընէն միացած էր Էլիվլենտ Զեվելիըզին (2019-ին):

Զայրի վերջապէս առիթ պիտի ունենայ խաղալու Զուփըր Ֆլէշի կողքին, որ անցեալ տարուան լաւա-գոյն նորեկ մարզիկը (ռուքի) ընտրուած էր:

«Անհամբեր կը սպասեմ իրեն հետ աճելու: Բարձր մակարդակի մարզիկներ, հոգ չէ տարիքը... Երբ միա-սին դաշտ կը ներկայանանք, շատ մրցումներ շահե-լու պատրաստ կ'ըլլանք» ըսաւ Ըրվինկ:

«Երբ այսպիսի մէկը կողքիդ ունենաս միշտ, անե-րեակայելի բան մըն է», ըսաւ Ֆլէյ: Ամբողջ մեր փոր-ձերուն բաւական մօտեցանք իրար: Անհամբեր կը սպասեմ, եւ հաճելի պիտի ըլլայ դաշտ ներկայանալը անոր հետ»:

Զայրի Ըրվինկ, որ 2016-ին «ԷՆ. Պի. Էյ.»-ի պիտե-ան դարձած էր Էլիվլենտ Զեվելիըզի հետ, կը նկատ-ւի «ԷՆ. Պի. Էյ.»-ի լաւագոյն մարզիկներէն, որ գնդա-կին կրնայ տիրապետել:

ԱԶԳԵՐՈՒ ԼԻԿԱ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՆՈՐՎԵԿԻԱ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐԵՑԻՆ

Ազգերու լիկայի երկրորդ հանգրուանի մրցումնե-րուն, Գերմանիա ետրկէն Զլովի հետ իր երկրորդ մըր-ցումին պարտութիւնը կրեց Յունաստանէն 1-0 արդիւնքով:

Բնականաբար արդիւնքը անակնկալ էր, մանա-ւանդ որ պատմութեան ընթացքին Յունաստան բնաւ չէր կրցած յաղթել Գերմանիոյ, որ սակայն մեծ փոփո-խութիւններ կը կրէ նոր նշանակուած մարզիչ Զլովիի հետ:

Մեծ թիւով մարզիկներ առաջին անգամ ըլլալով կը մասնակցին ազգային խումբին հետ, ուր Զլովի կ'ուզէ պատրաստել խմբակ մը, որ բաւական կայուն մնայ երկար ժամանակի վրայ:

«Բ. կիսախաղին առաջին բաժինը բաւական լաւ էինք բայց չեմ գիտեր ինչո՛ւ չշարունակեցինք այդ ձեւով», ըսաւ Զլովի, որ անակնկալի չէր եկած այս պարտութեամբ: Զլովի եղաւ Դելմուր Շեօնէն ետք միակ գերմանացի մարզիչը, որ իր առաջին երկու մըր-ցումներուն չէր կրցած յաղթել: Շեօն 1966-ի Մոնտիա-լին աւարտական հասած էր, 1970-ին՝ 3-րդ, 1974-ին՝



պիտեան, մինչ Եուրոյի գծով 1972-ին ախոյեան, իսկ 1976-ին՝ փոխախոյեան:

Օրերը պիտի կը փաստեն, թէ Զլովի պիտի յաջո-ղի՞, թէ՛ ոչ, կամ գերմանացիք որքա՞ն կրնան համբե-րել:

Նոյն խմբակին մէջ, Սերպիա իր դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութիւն կրեց Նետերլանտէն: Գերմանիոյ հետ հաւասար մնալէ ետք Զաւի Դեռ-նանտեսի մարզած խումբը կրցաւ յաղթել շնոր-հիւ Ալքմարի յառաջապահ Մեքս Մերտինքի Տալիէին:

Դ. խմբակին մէջ, Փորթուգալ 2-1 արդիւնքով շատ կարելոր յաղթանակ մը արձանագրեց Նոր-վէկիոյ մէջ: Ժոաօ Ֆելիքս եւ Կոնսալօ Ռամոշ նշանակեցին Փորթուգալի կուլերը, մինչ Էրլինկ Զալանտ նշանակեց միակ կուլը: Նոյն խմբակին մէջ Դանիա 2-0 արդիւնքով պարտութեան մատ-նեց Կալենը:

Այսօր Զեխիա կը հիւրընկալէ Անգլիան, իսկ Սպանիա՝ Խրուաթիան:

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՈՅԳ ՀԱՄԱԶԱԿԱՆՆԵՐԸ 6-ՐԴ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ ԱՄԱՐՏԵՑԻՆ ՕԼԻՄՓԻԱՏԱՆ

Կիրակի օր Սամար-զանտի մէջ վերջ գտաւ ճատրակի 46-րդ Օլիմ-պիատան: Տղոց հաւաքա-կաններու պիտեան դար-ձաւ հիւրընկալ երկրի Ուզ-պեքիստանը, մինչ աղջը-կանց պիտեան դարձաւ Զինաստան:

Հայաստանի տղոց հաւաքականը 11-րդ եւ վերջին հանգրուանին 3-1 արդիւնքով յաղթեց Խըր-լաթիոյ:

10-րդ դասուած Հայաս-տանէն յաղթանակներ ար-ձանագրեցին Շանթ Սարգսեան եւ Մանուէլ Պետրոսեան, մինչ Ռո-պերթ Յովհաննիսեան եւ Գաբրիէ Սարգսեան հա-ւասարութիւններ արձա-նագրեցին իրենց ճակա-տումներուն:

Այս յաղթանակէն ետք, Հայաստան 17 կէտով (կա-րելի 22-էն) գրաւեց 6-րդ դիրքը:

Ախոյեան Ուզպեքիս-տան 20 կէտ հաւաքեց, մինչ Յոկաստան (2-րդ) եւ Գերմանիա 18 կէտ ձեռք ձգեցին: Միացեալ Նա-հանգներ, Ազրայէճան, Հայաստան եւ Յունգարիա 17 կէտ ձեռք ձգեցին:

Աղջկանց հաւաքակա-նը 3-1 արդիւնքով պար-տութեան մատնեց հիւրըն-կալ Ուզպեքիստանը: Լի-լիթ Սկրտչեան եւ Մարիամ Մկրտչեան յաղթանակներ արձանագրեցին, մինչ Էլի-նա Դանիէեան եւ Սուսան-նա Գաբոյեան հաւասա-րութիւններ արձանագրե-ցին: Պէտք է ըսել, որ Հա-յաստան որ 16-րդ դիրքի վրայ դասուած էր, 6-րդ պատուաւոր դիրքը գրաւեց:

Տղոց պարագային, հաւաքականը դասուած էր 10-րդ դիրքի վրայ, բայց անոնք ալ կրցան 6-րդ դիրքը գրաւել:

Հայաստանի աղջկանց հաւաքա-կանն ալ 17 կէտ կրցաւ հաւաքել, մինչ



պիտեան Զինաստան 20 կէտով առանձին գրաւեց առաջին դիրքը:

Ղազախստան 18 կէտ հաւաքեց եւ գրաւեց 2-րդ դիրքը, մինչ Յոկաստան, Միացեալ Նահանգներ, Լեհաստան եւ Մոնկոլիա (7-րդ) 17-ականներ հաւա-քեցին:

ՄԱՆԶԵՍԹԸՐ ՍԻԹԻԻ ՎՃԻՌԸ...

Անցեալ շաբաթավեր-ջին Մանչեսթըր Սիթիի նիւթը անգամ մը եւս ցըն-ցեց եւրոպական ֆութբոլի աշխարհը:

2023-ին շշուկներ կա-յին, թէ Մանչեսթըր Սիթի 2009-էն 2018 տարեշրջան 115 նիւթական խախտում-ներ կատարած էր, բայց պաշտօնական դատավա-րութիւն տեղի չէր ունեցած եւ յետաձգուած էր:

Սակայն այս անգամ անելի լուրջ էր հարցը, ըստ երեւոյթին, որովհետեւ 115 խախտումներէն 114-ն փաստացի



էին, եւ ակումբը լուրջ հարցերու առջեւ կը գտնուի:

Շաբ.ը՝ էջ 8

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ՍԹԵՖ ԲԸՐԻ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՆԶԵՒ 2029

Կոլտըն Սթեյթ Ուո-րիըրզ համաձայնութիւն մը ունեցաւ «ԷՆ. Պի. Էյ.»-ի պատմութեան աստղերէն Սթեֆ Բըրիի հետ, որ 2 տարի եւս մնալու խումբին հետ՝ մինչեւ 2029:

Բըրի համաձայն էր 116 միլիոն ամ. տոլարի փո-խարէն խաղալու, հակա-ռակ անոր որ ան կրնար պահանջել մինչեւ 136 մի-լիոն: Ան ձեւով մը «զեղջ» կատարեց խումբին՝ հա-ւատարիմ մնալով անոր մինչեւ ասպարեզի աւարտը:

Երկու անգամ լաւագոյն «Էմ. Վի. Փի.» ընտրուած Բըրի «ԷՆ. Պի. Էյ.»-ի պատմութեան առաւելագոյն 3 կէտնոց կողովներ նշանակող մարզիկն է:

38 տարեկան Բըրի այս տարեշրջա-նը պիտի սկսէր 62,6 միլիոն ամ. տոլար պայմանագրութեամբ, եւ այս ձեւով 20 տարեշրջաններ պիտի ամբողջացնէ մինչեւ 2029:

Եթէ 2028-2029 տարեշրջանը ամ-բողջացնէ, ան պիտի ըլլայ «ԷՆ. Պի. Էյ.»-ի միայն 4-րդ մարզիկը, որ 20 կամ



անելի տարեշրջաններ կը խաղայ մէկ խումբի հետ: Նախապէս Տըրք Նո-վիթթի (Տալաս Մետրիքս), Զոպի Պրա-յընթ (Լոս Անճելըս Լէյքըրզ) եւ Ուոտնիս Դաւլեմ (Մայեմի Ջիթ) իրենց ասպա-րեզները ամբողջացուցած էին իրենց միակ ակումբներուն հետ:

Անցեալ տարեշրջանին Բըրի 43 մր-ցումներու կրցաւ մասնակցիլ միայն, միջին հաշուով 26,6 կէտ, 4,7 էսիսթ եւ 3,6 ռիպաուստ կատարելով 31 վայր-կեաններու ընթացքին:

Շաբ.ը՝ էջ 8

ՌՈՒԲԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԴԻՄԱԾ Է ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆԻՆ



Պաքուի մեջ 20 տարուան բանտարկութեան դա-տապարտուած Արցախի նախկին պետական նա-խարար Ռուբեն Վարդանեան 16 սեպտեմբեր 2026-ին հրապարակային ուղերձ յղած է Ազրայեճանի Մար-դու իրաւունքներու պաշտպան Սապինա Ալիեային, որ աւելի կանուխ պատրաստակամութիւն յայտ-նած էր աջակցելու հայ դատապարտեալներու իրա-ւունքներու պաշտպանութեան հարցով:

Վարդանեան, որ Յայաստանի 18 այլ քաղաքացի-ներու հետ կը գտնուի Ումպաքի քրեակատարողա-կան համալիրին մէջ, իր ուղերձին մէջ թուարկած է շարք մը խախտումներ, որոնք նախ եւ առաջ կը հա-կասեն ինքնին Ազրայեճանի օրէնսդրութեան:

Ան յղում կատարած է Պատիժներու կատարման օրէնսգիրքին եւ դատապարտեալներու իրաւունքնե-րուն մասին գրքոյկին, զոր այս տարուան ապրիլին Ազրայեճանի Մարդու իրաւունքներու պաշտպանի գրասենեակը տրամադրած է բանտարկեալներուն: Ան ընդգծած է, որ այդ իրաւունքները պէտք է պահ-պանուին՝ անկախ մեղադրանքի յօդուածէն, ազգու-թենէն, կրօնական պատկանելիութենէն եւ քաղաքա-ցիութենէն:

Վարդանեանի բարձրացուցած հարցերուն կար-գին են բանտարկեալներուն մէկ մասին համար շա-բաթական դրութեամբ հեռաձայնային հաղորդակ-ցութիւններու բացակայութիւնը եւ տեսագանգերու անհասանելիութիւնը, որուն պատճառով անոնցմէ ոմանք գրեթէ երեք տարի է չեն տեսած իրենց զա-ւակները: Ան յիշած է նաեւ սեփական միջոցներով բժշկական քննութիւններու անկարելիութիւնը, նո-տարական ծառայութիւններու մերժման պատճառով հարազատներուն անուով լիազօրագիր ձեակերպե-լու անկարելիութիւնը, ֆիզիքական վարժութիւններու սահմանափակումը շաբաթական մէկ անգամ՝ 20-40 վայրկեան՝ օրական սահմանուած մէկ ժամի փոխա-րէն, ինչպէս նաեւ դիմումներուն եւ բողոքներուն գրա-ւոր պատասխաններու բացակայութիւնը:

Վարդանեան յատուկ կերպով անդրադարձած է այն հանգամանքին, որ Ազրայեճանի մէջ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի գործունեութեան դադ-րեցումէն ետք բանտարկեալները զրկուած են ընտա-նիքներուն հետ կապի կարելոր ուղիէն, անոնց մեծ մասը ծանրոցներ չի ստանար: Ան նաեւ շեշտած է, որ շատեր նոյնիսկ առիթ չունին բանտային խանութէն սննդամթերք գնելու եւ հեռաձայններ կատարելու, որովհետեւ միջոցներ չունին:

Ան յիշեցուցած է նաեւ նախաձեռնութեան մասին իր կնոջ՝ Վերոնիքա Չոնապետի, որ պատրաստ է մեկնիլ Պաքու, հանդիպում ունենալ Մարդու իրա-ւունքներու պաշտպանին եւ Յայաստանի դատա-պարտուած քաղաքացիներուն հետ, անոնց փոխան-ցել մօտ հազար նամակ, ծանրոցներ եւ անհրաժեշտ իրեր: Անոր դիմումները մնացած են անպատասխան, իսկ այլընտրանքային լուծում չէ առաջարկուած:

Վարդանեան առաջարկած է Մարդու իրաւունք-ներու պաշտպանին հանդիպում ունենալ բանտար-կեալներուն հետ՝ աւելցնելով. «Կարելոր չէ, թէ տա-կալին որքան ժամանակ կ'անցընենք Ումպաքիի մէջ: Կը խնդրեմ՝ հետեւեցէ՛ք ձեր իսկ օրէնքներուն», շեշ-տած է ան:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ...»

Շարունակուած Ա. էջէն

«Բազմազանութիւնը պաշտպանել չի նշանակեր կամ չ'ենթադրեր տուեալ երկրի կամ շրջանի մը մաս-նատումը, նմանապէս՝ հարաւային Լիբանանի մէջ քրիստոնեայ ներկայութեան պաշտպանութիւնը զայն իր արաբական կամ միջինարեւելեան շրջա-պատէն մասնատել չի նշանակեր», դիտել տուաւ ան:

«Իսկական պաշտպանութիւնը կը հիմնուի պետու-թեան, հաւասար քաղաքացիութեան, օրէնքի գերա-կայութեան, մարդկային իրաւանց, միջազգային օրէնքի յարգումի եւ անխտիր բոլոր բաղադրիչ տար-րերու պաշտպանութեան վրայ», ընդգծեց Բագրա-տունի՝ իր խոր յարգանքն ու խոնարհումը արտայայ-տելով բոլոր անոնց, որոնք պաշտպանեցին եւ կը պաշտպանեն 10.452 քառ. քմ տարածութեամբ լի-բանանեան հայրենիքը:

ՄԻԱՅՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ...

Շարունակուած Ա. էջէն

Եւ որ թերիւն կը սպասէ Ուաշինկթընի վերջնական դիրքորոշումին՝ իր հետագայ քայլերը որոշելու հա-մար:

«Մեր պայմանները յստակ են, եւ Զորմուզի նեղու-ցի վերաբացման ուղղութեամբ որեւէ քայլ կախուած է այդ պայմաններու բաւարարումէն», ընդգծած է Իրանի արտաքին գործոց նախարարը՝ աւելցնելով, որ կարելի է խնդիրի միայն բանակցային լուծում:

ԿԻԼԵՐ. «ՅՈՅՍ ՈՒՆԻՆԸ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՀԱՍՆԻՆ»



Յոյս ունիք, որ Յայաստանի Հանրապետութիւնն ու Ազրայեճանը պիտի հասնին խաղաղութեան: «Էր-մենիհապեր» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Եաշար Կիւ-լեր՝ մասնակցելով «Թուրքիա-Ազրայեճան բարեկա-մութեան եւ համագործակցութեան հիմնադրամ»-ին կողմէ կազմակերպուած ձեռնարկին:

Կիւլեր նշած է, որ երկու երկիրներու ռազմավա-րական համագործակցութիւնը բոլոր ոլորտներուն մէջ կը զարգանայ:

Անդրադառնալով Յայաստան-Ազրայեճան խա-ղաղութեան հոլովոյթին՝ Կիւլեր նշած է, որ գոհունա-կութեամբ կ'ընդունի անցեալ տարի Ուաշինկթընի մէջ ձեռք բերուած նախաստորագրումը եւ վերջերս խաղաղութեան հաստատման ուղղութեամբ ձեռ-նարկուած դրական քայլերը:

«Յոյս ունիք, որ վայրկեան առաջ պիտի հաստատ-ւի համապարփակ ու մնայուն խաղաղութիւն: Կ'ա-ջակցիմք գործընթացը այնպիսի մօտեցումով աւար-տին հասցնելու ջանքերուն, որ պիտի ամրապնդէ կայուն շրջանային խաղաղութիւնը եւ պիտի նպաս-տէ ամբողջ շրջանի ժողովուրդներու խաղաղութեան ու բարօրութեան», նշած է Կիւլեր:

Ըստ բանոր, Կոլկասը ոչ թէ հակամարտութիւննե-րու, այլ համագործակցութեան, զարգացման ու բա-րօրութեան կարիք ունի, եւ հաւատացած է, որ Թուր-քիոյ եւ Ազրայեճանի ամուր համերաշխութիւնը եւս այդ նոր շրջանի կարելորագոյն երաշխիքներէն մէկն է:

ՔԱՐԹՀԱՅՉԵՐ. «ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԱԳԱՅԻՆ ԿՐՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՌՈՒՄԻՈՅ ԴԵՄ ՔԱՅԼԵՐՈՒ ԶԵՆԱՐԿՈՒՄ ՊԱՅԱՆՁԵԼ»



Եւրոպական Միութիւնը հետագային կրնայ Հա-յաստանէն պահանջել Ռուսիոյ դէմ քայլեր ձեռնար-կել՝ Երեւանի եւ Եւրոպական Միութեան ընդհանուր արտաքին եւ անվտանգութեան քաղաքականու-թեան մերձեցման զուգահեռ: Այս մասին «Իզվես-թիա»-ին յայտարարած է Լիւքսեմպուրկէն Եւրոպա-կան խորհրդարանի պատգամաւոր Ֆեռնանտ Զարթիայգեր:

«Առայժմ չեմ անկկալեր, որ տուեալ պարագային Եւրոպական Միութիւնը Յայաստանէն Ռուսիոյ դէմ գործողութիւններ պահանջէ: Բայց եւ այնպէս, չեմ կասկածիր, որ ապագային Յայաստանէն պիտի խնդրեն որդեգրել նման քայլեր՝ հաշուի առնելով, որ անիկա սկզբունքօրէն ստանձնած է Եւրոպական Միութեան ընդհանուր արտաքին եւ անվտանգու-թեան քաղաքականութեան մօտենալու պարտաւո-րութիւն: Յոյսով եմ, որ Յայաստանը պիտի կարենայ դիմակայել նման ճնշումին, որովհետեւ ատիկա անոր շահերէն կը բխի», ըսած է Զարթիայգեր:

ՍԹԵՖ ԶԸՐԻ ...

Շարունակուած 7-րդ էջէն

Ան երկու ամիսներէ աւելի բացակայած էր աջ ծունկի ցաւի պատճառով՝ կորսնցնելով «Օլ Սթար» մրցումին մասնակցելու յոյսերը:

Քըրի 4 անգամ «Էն.Պի.Էյ.»-ի տիտղոսը շահած է, վերջինը՝ 2022-ին Ուորիլըզի ընդհանուր տօնօրէն Մայք Տանիվի ըսաւ. «Մենք անհաւատալի ձեւով բախտաւոր պէտք է զգանք ականատես ըլլալու 17 տարուան ժառանգութեան մը, եւ ուրախ ենք որ մեր համակիրները պիտի շարունակեն տեսնել անոր պատմութեան մէջ նոր էջեր գրելը»:

«ԱԶԳԱԿ»Ի ՀՆՈԱԶԱՅԻ ԹԻԻՆԵՐԸ

«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար
հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.-
(01)258526, (01)260115 եւ (01)241274:

ՄԱՆՉԵՍԹԸՐ ՍԻԹԻԻ...

Շարունակուած 7-րդ էջէն

Այս տարեշրջանէն առաջ, սպանա-ցի մարզիչ Փեփ Կուարտիոյա ըստ երեւոյթին մթնոլորտէն կասկածներ ու-նենալով իր պայմանագրութեան ա-ւարտէն տարեշրջան մը առաջ լքեց ակումբը՝ այս բոլոր հարցերուն մէջ չմտնելու համար:

Տակաւին յստակ չէ, թէ ի՞նչ ձեւի պատիժներ պիտի սահմանուին: Մըթ-նոլորտը վստահաբար վատ անդրա-դարձ պիտի ունենայ մարզիկներուն վրայ, թէ խումբը պիտի փոխանցուի՝ աւելի ցած դասակարգ... Եւրոպայի բաժակներէն հեռացո՞ւմ: Մինչեւ իսկ Մանչեսթըր Եունայթըտ եւ Լիվըրփուլ տիտղոսներու պահանջ ունին եթէ ան-շուշտ փաստուին այս բոլոր մեղադ-րանքները:

2011-2012 տարեշրջանին մէկ կողի տարբերութեամբ Սիթի ախոյեան

դարձած էր՝ իր ետին ձգելով Եունայ-թըտը: 2017-2018 տարեշրջանին ալ Եունայթըտ Բ. դիրքը գրաւած էր... 19 կէտերու տարբերութեամբ (որ մրցա-նիշ մըն էր): 2013-2014 տարեշրջանին Լիվըրփուլ գրաւած էր Բ. դիրքը՝ Սի-թիի ետին:

Կան ակումբներ, որոնք այժմէն կը մտածեն ձեռք ձգել Սիթիի մարզիկնե-րը: Այս բոլորը կրնան տեղի չունենալ, կամ անգամ մը եւս յետաձգուիլ, մա-նաւանդ եթէ Սիթի անգամ մը եւս բո-ղոք ներկայացնէ:

Բայց եթէ իրապէս Սիթիի մարզիկ-ները լքելու ըլլան ակումբը, մեծ թիւով աստղեր կան, որոնք անմիջապէս կըը-նան փոխանցուիլ Ռեալ Մատրիտի կամ Փարիզ Մեն ժերմենի նման ակումբներու, որոնք մանաւանդ հիմա լաւ վիճակի մէջ չեն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄՊԱՐ ԻՓԷԿԵՆ» ԹԱՏԵՐԱՌՈՒՄԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՏԵԼ

ԴՈՂ՝ ՍԻՐՄՐԸ ԳՈՂ

ՄԱՐԻՈ ՏՕ

(Կադակերգութիւն)

ԲԵՏԱՌՈՐԴ
ՅԱԿՈԲ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

9-10-11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2026 | ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԱՆ 8:00-ԻՆ
«ՅԱԿՈԲ ՏԵՐ ՄԵԼՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՐԱՐԿ

ENGLISH SUBTITLES

Տոմսերու համար հեռաձայնել 03-852712 թիւին,
ինչպէս նաեւ Էլոյթի օրերը կիշէ՛ն:

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՆԻ ԿԱԶՄԱՅԻՆ ԿԵՆՏՐ

ՆՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷԼ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 ԵՎ 95 MHz

7.00- Քայլերգներ	4.20- Ազնաւուրի երգերու կա-տարումներ
7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս	5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան
7.15- Տանգարտ երգեր	5.05- «Ունկնդրութեան վայելքը» (Գարմէն Աճմեանի հետ)
8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	5.30- Սիրուած երգեր
9.00- Հայրենի սիրուած երգեր	6.00- Հայրենի երգիչներու կա-տարումներ
10.00- Խանդավառ երգեր	6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
10.30- Հայկական աշխարհի լուրեր	6.50- Եղանակներ
10.45- Լիբանանահայ երգիչներու կատարումներ	7.00- ՀՀԴ ԼԵՄ-ի «Արծիւ» յայ-տագիր. հիւր՝ Շաղիկ Գան-տահարեան (ուղիղ՝ դիմա-տեսքով)
11.00- «Օրուան հետ»	7.30- Չուգերգներ
11.10- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ	8.00- Օրուան երգիչ (Մարալ Այվազ)
12.00- «Երկրի հարցը. հիւր՝ Կարէն Միրզոյեան	8.30- Radio Jazz
12.30- Աշուղական երգերու արդի կատարումներ	9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր	9.45- Եւրոպայի երգեր
1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	10.00- «Խողեղան» (Բ. Խաղորդում)
2.00- «Յիշատակելիները» (Երիկ Գալստեան)	10.00- Սիրային երգեր
2.05- Յեղափոխական երգեր	12.00- «Յիշատակելիները» / Յեղա-փոխական երգեր
3.00- «Զըլ եմ պիոյմու» (ուղիղ՝ դիմատեսքով)	2.00- Եւրոպայի երգեր
4.00- Հրական անդաստան» (Քրտաբըրքական դրուագներ եւ պատմութիւններ հայ անձ-նաւորութիւններու եւ Հայաս-տանի մասին)	3.00- Կրկնութիւններ
	5.00- Հայերէն այլազան երգեր
	6.00- Հանդարտ երաժշտութիւն

Ձեր մնայուն ընկերակիցը **Radio Voice of Van:Live**

DOWNLOAD

Google Play Apple Store

Ձեր մնայուն ընկերակիցը